

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԵՍԿՆԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՄԻ ՍԵԼՋՈՒԿԵԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒՄ

Գագիկ Դանիելյան

Ա. Պաշտոնական գրագրության լեզուն Ռուսի սելջուկեան սուլթանութիւնը ձեւաւորուել է գրեթէ նոյն ժամանակ, ինչ Կիլիկիոյ Հայոց իշխանապետութիւնը: Միջինասիական Արաբեան լճի շրջակայքում բնակող սելջուկ-թիւրքական խաչնարած ցեղերի զանգուածային գաղթի եւ նուաճումների հետեւանքով դեռ ժ.Ա. դարի 30-ականներին ստեղծուել էր Մեծ Սելջուկեան պետութիւնը (1037-1194 թթ.): Մտն 60 տարուայ ընթացքում սելջուկ սուլթաններ թողորու-բեկը (կառ. 1038-1063 թթ.), Ալի-Արսլանը (կառ. 1063-1072 թթ.) եւ Մելիք-Շահ Ա-ը (կառ. 1072-1092 թթ.) բռնազաւթեցին լայնածաւալ տարածքներ (Իրան,

Շիրվան, Միջագետք, Հայաստան, Վրաստան եւ այլն)՝ իրենց ենթարկելով մեծաթիւ ժողովուրդների: 1071 թ. Մանազկերտում կրած ջախջախիչ պարտութիւնից յետոյ սելջուկեան յորդանների առջեւ ընկրկեց նաեւ Բիւզանդական կայսրութիւնը՝ ստիպուած լինելով նրանց գիջել իր փոքրասիական տիրոջները: Մելիք-Շահի մահից յետոյ սկսուել է Սելջուկեան պետութեան թուլացման գործընթացը, որն ուղեկցուել է կենտրոնական իշխանութիւնը միայն ձեւականորէն ընդունող փոքր պետական միաւորների առաջացմամբ<sup>1</sup>: Սրանցից էր նաեւ Ռուսի սելջուկեան սուլթանութիւնը (1077-1308 թթ.)<sup>2</sup>, որը հիմնադրել է սելջուկ

զօրավար Սուլէյման իբն Գիլմուշը (1077-1086 թթ.)՝ Մելիք-Շահ Ա-ի զարմիկներից մեկը: Սկզբում մայրաքաղաքը Նիկիան էր, ապա՝ Կոնիան: Իզգ ալ-Դին Կիլիք Արսլան Բ-ի (կառ. 1156-1192 թթ.) երկարատեւ կառավարման շրջանում Իկոնիայի սուլթանութիւնը դառնում է տարածաշրջանային լուրջ ուժ, որի զօրութիւնն արդէն բաւական էր զսպելու Բիւզանդական կայսրութեան՝ իր կորցրած փոքրասիական տարածքները վերագրաւելու ախորժակը:

Մասնաւորապէս, Միրիոկեֆալոնի 1176 թ. ճակատամարտում բիւզանդացիների կրած պարտութիւնը, ոչ այնքան ռազմական, որքան ծանր հոգեբանական ազդեցութիւն թողեց Բիւզանդիայի վրայ՝ վերջ դնելով նրա յաւակնութիւններին: Լեւոն Մեծագործի իշխանապետութեան (կառ. 1187-1198 թթ.) եւ թագավորութեան (Լեւոն Ա արքայ, կառ. 1198-1219 թթ.) օրօք Իկոնիան արդէն վտանգաւոր թշնամի է դառնում նաեւ Կիլիկեան Հայաստանի համար<sup>3</sup>:

P. Blessing and R. Goshgarian, *Edinburgh University Press, Edinburgh, 2017* իրենց մատենագիտութիւններով: Իկոնիա-բիւզանդական կայսրութիւն, Իկոնիա-նիկիական կայսրութիւն եւ առհասարակ թիւրք-բիւզանդական առնչութիւնների թեմայով իտալացի փոքրէրտագետները եւ կատարել Դ. Կորոբէյնիկովը: Տե՛ս D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, Oxford University Press, Oxford, 2014: Պատմագրութեան եւ առհասարակ մատենագրական ժառանգութեան վերաբերելով հիմնական ուսումնասիրութիւնների թուարկումը տե՛ս մեր գործընկեր Ռ. Շուքուրովի մի յօդուածում (P.M. Шукуров, «Образ Киликийской Армении в анатолийских мусульманских источниках (XIII-XIV в.)», Ա. Բոգոլեւան (խմբագիր), Ռ. Շուքուրով, Վ. Տեր-Ղեոնդեան, Գ. Դանիելյան, Կիլիկեան Հայաստանը սահմանակից պետական միաւորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ), ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2016, էջ. 86, խ. 2), ինչպէս նաեւ R. Shukurov, «The Image of Cilician Armenia in Anatolian Muslim Sources (XIII-early XIV centuries)», in *Cilician Armenia in the Perceptions of Adjacent Political Entities (Historical-Philological Essays)*, by A.A. Bozoyan (editor), V.A. Ter-Ghevondian, R.M. Shukurov, G.G. Danielyan (tr. from Armenian by A. Martirosyan), «Gitutyun», Yerevan, 2019, p. 77, n. 2: Տե՛ս նաեւ Է. Փիքրոյի վերջերս հրատարակած գիրքը: Տե՛ս A.C.S. Peacock, *Islam, Literature and Society in Mongol Anatolia*, Cambridge University Press, Cambridge, 2019: Հայ-սելջուկեան յարաբերութիւնների բազմաթիւ դրուագներ. քննարկում են Կիլիկեան Հայաստանի պատմութեանը նուիրում հայ եւ օտար հեղինակների տարբեր աշխատութիւններում՝ սկսած Հ. Ղ. Ալիշանից: Առանձնապէս երկու պետութիւնների քաղաքական յարաբերութիւնների վերաբերելով ուսումնասիրութիւնները շատ չեն: Վերաբերելով ուսումնասիրութիւնները շատ չեն: Առաւել կարեւորներից տե՛ս S.N. Yildiz, «Reconceptualizing the Seljuk-Cilician Frontier: Armenians, Latins, and Turks in Conflict and Alliance du-

ring the Early Thirteenth Century», in *Borders, Barriers, and Ethnogenesis: Frontiers in Late Antiquity and the Middle Ages*, Brepols Publishers, Turnhout, 2005, pp. 91-120, ինչպէս նաեւ Ռ. Շուքուրովի վերջին յիշուած յօդուածը (2016 թ.) մեր համահեղինակութեամբ հրատարակուած ժողովածոյում: Հայ-սելջուկեան յարաբերութիւնների թեմայով մի քանի յօդուած ունի Արամ Յովհաննիսեանը, որոնք, սակայն, լրացելի են սելջուկեան եւ առհասարակ մուսուլմանական սկզբնաղբիւրների հիւթով: Տե՛ս Ա. Յովհաննիսեան, Կիլիկեան Հայաստանի եւ Իկոնիայի Սելջուկեան սուլթանութեան միջեւ 1218 թ. կնքուած հաշտութեան պայմանագրի շուրջ,- «Բանբեր Երեւանի համալսարանի» (Միջազգային յարաբերութիւններ, քաղաքագիտութիւն), № 131.6, Երեւան, 2010, էջ 71-78; նոյնի՝ Կիլիկիայի Հայկական թագաւորութեան եւ Իկոնիայի Սուլթանութեան յարաբերութիւնների պատմութիւնից (1220ական թուականներ),- «Բազմավէպ», ԾԿԸ տարի, թիւ 1-2, 2010, էջ 191-203; նոյնի՝ Կիլիկեան Հայաստանի եւ Իկոնիայի սուլթանութեան յարաբերութիւնների պատմութիւնից (13-րդ դարի 40-ական թուականներ),- «ԲԵՀ» (Միջազգային յարաբերութիւններ, քաղաքագիտութիւն), № 137.6, Երեւան, 2012, էջ 55-63; նոյնի՝ Կիլիկիայի հայկական թագաւորութեան եւ Իկոնիայի սուլթանութեան յարաբերութիւնները 1198-1219 թուականներին,- «Էջմիածին», ԿԸ (Բ), 2012, pp. 83-93: Անշուշտ, արժէ յիշատակել նաեւ հայ-սելջուկեան երկվեզուութեան դրամներին վերաբերող իտալացի փոքրէրտագետները: Տե՛ս P. Bedoukian, *The Bilingual Coins of Hetoum I, (1226-1270), King of Cilician Armenia*,- *Museum Notes* (American Numismatic Society), vol. 7, 1957, pp. 219-230, ինչպէս նաեւ նոյնի՝ *A Hoard of Bilingual Trams of Hetoum I of Cilician Armenia*,- *MN (ANS)*, vol. 23, 1957, pp. 149-160; նոյնի՝ *Coinage of Cilician Armenia*, The American Numismatic Society, New York, 1962, pp. 84-85, ինչպէս նաեւ Y.T. Nersessian, *Attribution and Dating of Armenian Bilingual Trams*, Armenian Numismatic Society, Special Pub-

<sup>1</sup> Մեծ Սելջուկեան պետութեան պատմութեան վերաբերելով հարուստ գրականութիւն կայ: Առաւել կարեւորներից տե՛ս A.K.S. Lambton, «The Internal Structure of the Seljuq Empire», in *The Cambridge History of Iran, vol. V (The Seljuk and Mongol Periods)*, ed. by J.A. Boyle, Cambridge University Press, Cambridge, 1968; *The Seljuqs Politics, Society and Culture*, ed. by Chr. Lange and S. Mecit, Edinburgh University Press, Edinburgh, 2011 (սելջուկների քաղաքական, սոցիալ-մշակութային պատմութեանը նուիրում տարբեր հեղինակների յօդուածների ժողովածոյ է); A. C. S. Peacock, *Early Seljuq History. A new interpretation*, Routledge, London & New York, 2010, ինչպէս նաեւ նոյնի՝ *The Great Seljuq Empire*, Edinburgh University Press, Edinburgh, 2015՝ իրենց մատենագիտութեամբ: <sup>2</sup> Ռուսի պատմութեան վերաբերելով դասական աշխատութիւնները իտալացիներն են S. Vryonis, *The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization. from the Eleventh through the Fifteenth Century*, Berkeley, CA, 1971; O. Turan, *Selçuklar zamanında Türkiye:*

*Siyâsi tarih Alp Arslan'dan Osman Gazi'ye 1071-1318*, Istanbul, 1971; B. Гордлевский, *Государство Сельджукидов Малой Азии*, Москва-Ленинград, 1941; Cl. Cahen, *La Turquie pré-ottomane* (Varia Turcica VII), Institut Français d'études Anatoliennes, Istanbul, 1988: Մարտարապետութեան եւ քաղաքային կեանքի մասին տե՛ս P. Blessing, *Rebuilding Anatolia after the Mongol Conquest. Islamic Architecture in the Lands of Rûm, 1240-1330*, Routledge, New York, 2016 (1st ed. Ashgate, 2014): Վերջին տարիներին Ռուսի սուլթանութեան պատմութեան մկատմամբ սուր հետաքրքրութիւն կայ, եւ ոլորտի մերօրեայ առաջատար մասնագետների՝ թեմայի զանազան ապակետներին վերաբերող յօդուածների մի քանի կարեւոր ժողովածոներ են հրատարակուել: Տե՛ս օրինակ՝ *The Seljuks of Anatolia. Court And Society In the Medieval Middle East*, ed. by A.C.S. Peacock and S.N. Yildiz, I.B. Tauris, London-New York, 2013; *Islam and Christianity in Medieval Anatolia*, ed. by A.C.S. Peacock, B. De Nicola, S.N. Yildiz, Ashgate, Farnhame, 2015; *Architecture and Landscape in Medieval Anatolia, 1100-1500*, ed. by

Ռուքն ալ-Դին Սուլէյման-Շահի (կառ. 1196-1204 թթ.) կառավարման շրջանի մասին Իբն Բիբին գրում է. «Իսլամի արքաներն ու սուլթանները, Հայոց թագֆուրները եւ հոռոմների կայսրերն ուրախութեամբ ընդունում էին այս ազնուական զարմի վսեմութիւնը եւ խարաջ ու տուրք (բնագրում՝ *bāğ*) էին մատուցում [նրա] Հարուստ գանձարան»<sup>4</sup>: Չնայած «Ֆիկտիւ» ստորակայութեանը՝ Լեւոնը ոչ պակաս վտանգաւոր հակառակորդ էր Հէնց Ռուսի սելջուկների համար եւ երբեմն անգամ միջամտում էր նրանց ներքաղաքական գործերին: «Սուլթան [Կիլիչ Արալանի] մահից յետոյ, գրում է Միքայէլ Ասորի պատմիչը, Լեւոնը տիրացաւ Ռուսի երկրի 72 բերդի, որոնց մի մասը թիւրքերից էր վերցրել, միւս մասը՝ յոյներէ: Թիւրքերի հետ իր բոլոր պատերազմներում նա յաղթական էր, եւ սուլթանի որդիներն ապաստան էին գտել նրա մօտ: 1506 (1195) թուականին Աբլասթայնի տէր (էլբիստան, Հայ. Ապլստայ, Ապլսթայն) [Մուղիս ալ-դին Թողրուլ Շահը] գնաց եւ իր հաւատարմութիւնն առաջարկեց նրան: Ապա Լեւոնն արշաւեց Կեսա-

րիայի տիրոջ դէմ, յաղթեց նրան եւ նրանից Կեսարիայի մերձակայքի մի բերդ խլեց»<sup>5</sup>:

Ռուսի սուլթանութիւնն իր ծաղկման բարձրակէտին է հասել Ալայ ալ-Դին Քայկուբադ Ա-ի (կառ. 1220-1237 թթ.) օրօք, երբ Հայոց Հեթում Ա արքան (կառ. 1226-1269 թթ.) նոյնպէս ստիպուած է եղել գոնէ ձեւականօրէն ընդունել նրա գերիշխանութիւնը, նրա պատկերով երկլեզուեան դրամներ է հատել, զօրախմբեր է ուղարկել նրա ռազմական ձեռնարկումներին մասնակցելու համար, վճարել է Հարկ: Երկլեզուեան դրամների հատումը շարունակուել է նաեւ Քայկուբադի որդի եւ յաջորդ Ղիյաս ալ-Դին Քայխօսրով Բ-ի (կառ. 1237-1246 թթ) օրօք: Նրա կառավարման վերջին տարիներին անկասելի յաղթարշաւով տարածաշրջան են խուժել մոնղոլական բանակները: Արագ կողմնորոշուելով ստեղծուած նոր ռազմաքաղաքական բարդ իրավիճակում՝ Հայոց ռազմավարական վերնախաւը՝ ի դէմս Հեթում արքայի, Ամբաստանգոյտարի եւ թագաւորահայր Կոստանդին պայլի, վճռել է դրժել օժանդակ զօրքերով սելջուկներին օգնութեան հաս-

lication, № 2, Los Angeles, 1983, ինչպէս նաեւ Գնդի՝ *Armenian Bilingual Half Trams*, - "Armenian Numismatic Journal", vol. XXIV, 1998, pp. 17-23:

<sup>4</sup> Տե՛ս **Ibn-i Bībī, El-Evāmīrū'l-'Alā'iyye fi'l-umūri'l-'Alā'iyye**, onsöz ve fihristi hazirliyan A.S. Erzi, Türk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1956, s. 76 (այսուհետեւ՝ **Ibn-i Bībī, El-Evāmīrū'l-'Alā'iyye**): Համաժողովուրդային պատմութեան օրերին, եւ իսլամի արքաները, Հոռոմների կայսրերը, թագֆուրները, վրացիները, հնագույն էին նրան, եւ նախկինի պէտք տարբեր տեղերից ընծաներն ու հարկերը հոսում էին [սուլթանական] գանձարան: Տե՛ս *Recueil de Textes Relatifs à l'Histoire des Seldjoudides* par M.Th. Houtsma, vol. IV, Histoire des Seldjoudides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjoudicnāme d'Ibn-Bībī, E.J. Brill, Leide, 1902 (այսուհետեւ՝ **Ibn Bībī, Muhtasar**), s. 24: Բնագրում ընթերցած *al-durg-ը* Մ.թ. Հատրսման առաջարկում է ուղղել *al-kurg* (այն է՝ վրացիներ), մինչդեռ

մեր կարծիքով բառը գուցէ *arman* բառի (ինչպէս որ ամբողջական տարբերակում է) գրչական սխալագրութիւնն է:

<sup>5</sup> Տե՛ս *Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche 1166-1199*, éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Ernest Leroux, Paris, 1905, p. 411, ինչպէս նաեւ *The Syriac Chronicle of Michael Rabo (The Great)*. A Universal History from the Creation, eng. trans. by Matti Moosa, Beth Antioch Press, Teaneck, NJ, 2014, p. 735 եւ **Bar Hebraeus, Chronography**, p. 344: Սուլէյման-Շահի կառավարման շրջանի վերաբերեալ առանձին յօդուած ունի Ա. Սաւոիդէսը: Տե՛ս A.G.C. Savvides, *Suleyman Shah of Rom, Byzantium, Cilician Armenia and Georgia (A.D. 1197-1204)*, - "Byzantium", 2003, vol. 73, № 1, 2003, pp. 96-111: 1201 թ. սկսած Անտիոքի զախժախագութեան խնդրին Լեւոնի միջամտութիւնը շատ շուտով նրա դէմ ձեւատրուել է թշնամարար տրամադրուած հարեւանների «տեսակ դաշինք» ի դէմս Անտիոք-Տրիպոլիսի իշխանապետութեան, Ռուսի սուլթանութեան եւ Հալէպի Այիւբեան սուլթանութեան (տե՛ս ներքեւում):

նելու իր ստանձնած պարտաւորութիւնը եւ ինքնակամ ընդունել Հպատակութիւնը նոր նուաճողներին՝ իր երկիրն այդու զերծ պահելով նրանց աւերիչ ներխուժումից: Զուր չէ, որ ժամանակակից յիշատակագիրներից մեկն ուրախութեամբ արձանագրել է. «Արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ թագաւորին Հեթումոյ խորագէտ իմաստութեան եւ նախահոգակ հանճարեղութեան, մեք մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորը»<sup>6</sup>: ԺԴ դարի մամուլեան հեղինակ ալ-Ումարին (մահ. 1349 թ.) այսպէս պատկերաւոր է բնութագրել Ռուսի սուլթանութիւնից Կիլիկեան Հայաստանի ունեցած «ստորակայական կախուածութեան» բնոյթը. «Եւ վերջապէս նրանց Հպատակութիւնը Ռուսի սելջուկեան արքաների մնացած մասի նկատմամբ էր (*libaqqiyat al-mulūk al-salāğīqa bi-l-Rūm*), եւ նրանց վրայ [գլխա]հարկ ու [բոլորին] յայտնի հնազանդութիւն կար սահմանուած, եւ սելջուկեան արքայի կողմից երկրի վրայ գործակատար-վերակացուներ կային կարգուած (*al-'ummāl wa-l-šihānī 'alā al-bilād*), մինչեւ որ թուլացաւ այդ [սելջուկեան] պետութիւնը: ...Այս ամենն այն էր, ինչին տեսչում էր այդ անիծեալը, եւ նրա թռչնական արծուի վերածուեց, ու յաճախացան նրա երդմնազանցութիւնները. առանց պահապան մնացած հօտ տեսնելով [իր մօտ] քչեց-տարաւ, առանց հսկիչ մնացած ապրանքներ տեսնելով՝ դրանցով իր ծանրոցը լցրեց, եւ նա գրաւեց այս երկրներն ու տիրեց դրանց եւ [աստիճանաբար] նուազեցնելով սելջուկների ժառանգութիւնը՝ [վերջնականապէս] իւրացրեց այն»<sup>7</sup>:

Մինչդեռ մոնղոլների հետ առճակատման գնացած Ռուսի սուլթանութեան ճակատագիրն այլ կերպ է դասաւորուած: 1243 թ. Քէսեղաղի (Չմանկատուկի) ճակատամարտում նրանցից կրած ծանր պարտութիւնից յետոյ Սուլթանութիւնն իր գոյութեան հետագայ տարիներին արդէն հարկադրուած էր ընդունել իր անվերապահ վասալութիւնը մոնղոլներին: Ժամանակի ընթացքում երկրի փաստական իշխանութիւնը կենտրոնանում է մոնղոլների կողմից նշանակուած վերատեսուչների ձեռքին, եւ սուլթանների իշխանութիւնը հետզհետէ ձեռք է բերում սոսկ խորհրդանշական բնոյթ:

Ռուսի սելջուկեան սուլթանութեան եւ յարակից երկրների տիրակալների դիւանագիտական նամակագրութեան, Իկոնիայի դիւանատների աշխատանքի, դեսպաններ կալութեան եւ դեսպանագնացութեան արարողակարգի մասին հետազոտութիւնները շատ չեն: Իկոնիայի սուլթանութեան պատմութեան ուսումնասիրողներից Կլոդ Կահէնն, օրինակ, իր *La Turquie pré-ottomane* հիմնարար աշխատութեան մէջ ընդամենը երկու էջ է յատկացրել այդ թեմային<sup>8</sup>: Սուլթանութեան եւ Վենետիկի միջեւ 1220 թ. կնքուած եւ մեզ հասած առեւտրական համաձայնագրի քննութիւն է կատարել Մ. Մարտինը<sup>9</sup>:

Ռուսի սուլթանների եւ Հայոց արքաների պաշտօնական նամակագրութեան արարողակարգի մասին, ճիշտ է, սուղ, բայց բաւական հետաքրքրական տեղեկութիւններ կան ինչպէս ժամանակի Հայալեզու, այնպէս էլ Ռուսի սուլթանութեան պարսկալեզու պատմագրական գրականութեան

<sup>6</sup> Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ դար (այսուհետեւ՝ ՀԶԷ, ԺԳ դար) կազմեց Ա.Ս. Մաթեոսեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 233:

<sup>7</sup> **Al-'Umārī, Al-Ta'rif bi-l-muštalah al-šarīf, bi-tah-qīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-'ilmīyya**, Bayrūt, 1988, s. 81.

<sup>8</sup> **Cl. Cahen, La Turquie**, p. 188: Ռուսի սուլթանութեան արքունի գործակալութիւնների՝ այդ թում դիւանատան մասին տե՛ս նաեւ **D. Korobeinikov, Byzantium and the Turks**, pp. 84-88:

<sup>9</sup> **M.E. Martin, The Venetian-Seljuk Treaty of 1220**, - "The English Historical Review", vol. 95, № 375 (April), 1980, pp. 321-330.

մէջ: Առկայ են նաեւ վկայութիւններ երկու պետութիւնների տիրակալների միջեւ դիւանագիտական ընծաների փոխանակութեան վերաբերեալ: Այժմ այս մասին աւելի մանրամասն:

Ռուսի սուլթանութեան դիւանատանը, որ *dīwān-i tūgrā* (արաբերեն *dīwān al-inšā* -ի համարժէքը) էր կոչւում, պաշտօնական գրագրութեան լեզուն պարսկերէնն էր: Պարսկերէնով էին սովորաբար կազմ-ւում սելջուկեան սուլթանների պաշտօնական նամակները եւ այլ վաւերագրերը<sup>10</sup>: Այնուամենայնիւ, օտարերկրեայ միապետներին երբեմն նամակներ կարող էին յղուել նաեւ նրանց լեզուով: Օրինակ, մեզ են հասել Իզզալ-Դին Քալկաուու Ա սուլթանի անունից գրուած յունարէն նամակներ, ինչը վկայում է սելջուկեան դիւանատանը յոյն նոտարների ծառայութեան մասին<sup>11</sup>: Այս մասին վկայող այլ փաստեր էլ կան: Օրինակ, Ռուսի սուլթանների պաշտօնական պատմիչ Իբն Բիբին, ում մասին ներքեւում քիչ աւելի հանգամանալից կը խօսենք, իր երկուս, երբ պատմում է Տրապիզոնի կայսր Ալեքսիոս Ա Մեգաս Կոմնենոսի (կառ. 1204-1222 թթ.) եւ Իզզալ-Դին Քալկաուուսի միջեւ 1214 թ. կնքուած հաշտութեան պայմանագրի մասին, յիշատակում է *nūtā-*

*rān-e dīwān-e salṭanat*-ի («սուլթանական դիւանատան նոտարներ») մասին՝ ալնյայտօրէն նկատի ունենալով հէնց յունական գրասենեակի ատենագիրներին<sup>12</sup>: Բիւզանդական ծագման սելջուկահպատակները շատ յաճախ բարձր դիրք եւ պաշտօն են զբաղեցրել ոչ միայն Ռուսի ռազմավարչական համակարգում, այլ նաեւ դիւանատանը եւ «դիւանագիտական կորպուսում»: Յայտնի է; օրինակ, որ Քալկաուու Ա-ից 1216 թ. Կիպրոսի թագաւորին ուղարկուած դեսպանն ազգութեամբ յոյն «կիւ Ալեքսիոս» յորջորջուած մեկն էր<sup>13</sup>: Կրօնական եւ ֆինանսական փաստաղթերի, վիճաբար արձանագրութիւնների, սելջուկեան փողերանոցներից դուրս եկած դրամների նշագրութիւնների լեզուն էլ սովորաբար արաբերէնն էր<sup>14</sup>: Սուլթանական դիւանում գրագիրների (*kātib*-ների կամ *muntāzī*-ների) պատրաստած փաստաթղթերը վաւերացւում էին յատուկ տարբերակիչ նշանով, որ *tūgrā* էր կոչւում (այստեղից էլ դիւանատան անուանումը): Փաստաթուղթը կնիքով հաւաստագրելու գործողութիւնը վերապահուած էր *tūgrā*-ին, ով երբեմն *malik al-kuttāb* («գրագիրների արքայ») տիտղոսով էր կոչւում: Նա արքունի դիւանատան գլխաւոր քարտուղարն էր՝ դիւանագետը

<sup>10</sup> Այս առիթով արժանաշիշատակ է մի հետաքրքիր սկզբնաղբիւրային փաստ: Իբն Բիբին գրում է, որ երբ թուրքմէն Կարամանեաններն իրենց առաջնորդ Մեհմեդ-բեգի գլխատրութեամբ 1277 թ. աւանակալ կերպով գրաւում են Կոնիան, նրանք թուրքերէնը հռչակել են որպէս հաղորդակցութեան բոլոր ձեւերի պաշտօնական լեզու՝ պարսկերէնի եւ արաբերէնի փոխարէն: Չնայած, ինչպէս է. Փիքոքն է կարծում, պատմիչի այս վկայութիւնը կարելի է բացատրել նաեւ Կարամանեան ապստամբների մատուցած լոյսի ներքոյ ներկայացնելու նրա ցանկութեամբ, որոնք յանգում էին արգելել պարսկերէնը՝ մշակութի եւ քաղաքակրթութեան լեզուն՝ փոխարինելով այն գրական ցածր արժէք եւ վարկ ունեցող թուրքերէնով: Տե՛ս A.C.S. Peacock, *Islam, Literature and Society in Mongol Anatolia*, Cambridge University Press, Cambridge, 2019, pp.147-148: Մեհմեդ-բեգի «լեզուական ռեֆորմը» բարձր է գնահատուում արդի

Թուրքիայի ազգայնական գաղափարախօսութիւններում՝ նրան համարելով «թուրքերէնի պաշտպան» եւ «թուրքականութեան խորհրդանշան»: Տե՛ս S.N. Yildiz, *Karamanoğlu Mehmed Bey: Medieval Anatolian Warlord or Kemalist Language Reformer? History, Language Politics and the Celebration of the Language Festival in Karaman, Turkey, 1961-2008*, in Religion, Ethnicity and Contested Nationhood in the Former Ottoman Space, ed. by J. Nielsen, Brill, Leiden-Boston, 2012:  
<sup>11</sup> Cl. Cahen, *La Turquie*, p. 186-187.  
<sup>12</sup> W.H. Duda, *Die Seltenschukengeschichte des Ibn Bībī Munksgaard*, Kopenhagen, 1959, S. 67; S. Vryonis, *The Decline*, p. 233; P.M. Шукров, *Великие Комнины*, с. 100-101; D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, p. 86.  
<sup>13</sup> S. Vryonis, *The Decline*, p. 231-244.  
<sup>14</sup> Cl. Cahen, *La Turquie*, p. 187.

կամ ատենագետը (արաբ.՝ *šāhib dīwān al-inšā*)<sup>15</sup>: Արքունիքում գրագիրներից բացի եղել են նաեւ թարգմանիչներ (*tarğumān*), որոնք, ըստ Դ. Կորոբէյնիկովի, ինչպէս որ օտար միապետների հետ գրագրութեան համար պատասխանատու այլազգի (օրինակ՝ յոյն, հայ) նոտարները, գործել են ոչ թէ դիւանագետի, այլ պետական վեզիրի վերահսկողութեան ներքոյ՝ վեզիրի դիւանում (*dīwān-i salṭanat* կամ *dīwān-i a'lā* կամ *dīwān-i bozorg*), քանի որ հէնց նա էր արտաքին յարաբերութիւնների վարման պատասխանատուն<sup>16</sup>:

Որոշ փաստեր կան ենթադրելու, որ Ռուսի սուլթանութեան դիւանատանն արաբերէնին, պարսկերէնին եւ յունարէնին տիրապետող գրագիրների հետ միասին ծառայել են նաեւ քրիստոնեայ այլ՝ այդ թւում հայ ատենագիրներ, որոնք զբաղուել են Կիլիկիոյ հայոց թագաւորներից սելջուկ սուլթաններին հասցէագրուած, եւ հակառակը՝ սուլթաններից հայոց միապետներին ուղղուած պաշտօնական նամակներով, պատրաստել երկու երկրների քաղաքական յարաբերութիւնների վաւերագրերը (օրինակ՝ պայմանագրերը): Բնաւ չենք կարծում, թէ հայոց արքաների հետ գրագրութիւնն ամբողջութեամբ տարուած լինի հայերէնով: Թէեւ յստակ փաստ չունենք, այնուհանդերձ, կարող ենք ենթադրել, որ երկու տիրակալների պաշտօնական նամակա-

գրութեան մեծագոյն մասը կատարուել է որեւէ միջանկեալ լեզուով: Այդ դէպքում որպէս *lingua franca* հազիւ թէ կարող էր հանդէս գալ պարսկերէնը: Շատ աւելի հաւանական է յունարէնի տարբերակը, որին տիրապետողների պակաս հայոց արքունիքում եւ դպրատներում վստահաբար չէկար: Որոշ առանձին դէպքերում՝ յատուկ առիթներով միայն սուլթանները կարող էին օգտուել իրենց հայազգի ատենագիրների ծառայութիւններից, օրինակ, երբ երկլեզու համաձայնագրերի տեքստերի համաձայնեցման անհրաժեշտութիւն էր լինում:

Բիւզանդագէտ-թիւրքագէտ Դմիտրի Կորոբէյնիկովն իր մի յօդուածում այդպէս մտածելու բաւական հիմնաւոր փաստ է մատնանշել: Նա ուշադրութիւն է հրաւիրել Իկոնիայում՝ մասնաւորապէս Կեսարիայում, հայ գրչի ձեռքով գաղափարուած մի յունարէն աւետարանի<sup>17</sup> երկլեզու յունարէն եւ հայերէն յիշատակարանների վրայ (տե՛ս ներքեւում՝ Պատկեր 1, Պատկեր 2)<sup>18</sup>: Հայերէն յիշատակագրութիւնները երկուսն են: Մեկում ասուում է. «զՎասիլ գրիչ յիշեալիք առ Քրիստոս, զի եւ դուք յիշեալ լիջիք»: Երկրորդում կարդում ենք. «Գրեցաւ եւ կատարեցաւ Աւետարանս ձեռամբ իմով Վասիլ դպրագետիս ի Մելիտինոյ որդոյ Առեսասի քահանայի, թուին ՈՂէ (1226), յամսեան մայիս, ի պէտս անձին իմոյ եւ յիշատակ հոգոյ, ի կամս Քրիստոսի»<sup>19</sup>:

<sup>15</sup> Տե՛ս Ան, p. 186; В. Гордлевский, *Государство Сельджукидов*, с. 138-141; D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, p. 86:  
<sup>16</sup> D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, p. 86.  
<sup>17</sup> Ձեռագիրն այժմ գտնուում է Աթէնքի Գեմնադիուսի գրադարանում՝ Gennadius Ms. 1.5 համարի ներքոյ:  
<sup>18</sup> Տե՛ս D. Korobeinikov, *A Greek Orthodox Armenian in the Seljukid Service: The Colophon of Basil of Melitina*, in Mare et litora. Essays Presented to Sergei Karpov for his 60th Birthday, ed. by R. Shukurov, Moscow, Indrik, 2009, pp. 709-724: Այս ձեռագրի մասին առաջին անգամ խօսուել է Ջոն մեկ դար առաջ: Տե՛ս E. Zomarides, *Eine neue griechische Handschrift aus Caesarea vom J. 1226*

*mit armenischer Beischrift*, "Studien zur Palaeographie und Papyruskunde" 2, Verlag von E. Avenarius, Leipzig, 1902, S. 21-24: Դ. Կորոբէյնիկովից առաջ հայ գրչի ընդօրինակած ձեռագրի մասին իր հիմնարար աշխատութեան մէջ յիշատակել է Ս. Վրիոնիսը: Տե՛ս S. Vryonis, *The Decline*, p. 470, n. 95: Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս *Exploring Greek Manuscripts in the Gennadius Library* (Gennadeion Monographs VI), ed. by M.L. Politi and Eleni Pappa, tr. by J.C. Davis and E.K. Fowden, American School of Classical Studies at Athens in collaboration with the Greek Paleographical Society, Princeton, New Jersey, 2011, pp. 14-16:  
<sup>19</sup> ՀՁՀ, ԺԳ դար, էջ 145:

Հ. Ներսէս Ակինեանը «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում դեռ 1908 թ. Հայերէն է թարգմանել աւետարանի յունարէն յիշատակարանը, որը քիչ աւելի ինֆորմատիւ է Հեղինակի անձի մասին. «աւարտեցան չորք Աւետարանք քարոզացն Աստուծոյ, մեծացն չորից աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու ձեռամբ իմով Վասիլ դարպաստի Մելիտինեցուոյ, որդւոյ Ովրեստէսի քահանայի, ի ժամանակին յորժամ նուաճեաց մեծն սուլթանն<sup>20</sup> Քէյկուբադ, որդին Ղիթեղիինի Քէյ խոսրովու զՅունաստան<sup>21</sup>, զՀայաստան, զԱսորիս, եւ զամենայն տեղիս եւ զգաւառս թուրքաստանի եւ զծովու, մինչեւ ի մեծն Կեսարիա. եւ որք Հանդիպիք այսմ Աւետարանիս կամ օրինակէք կամ ընթեռնուք, յիշեսցիք զիս զբազմասխալս զՎասիլ եւ զծնողս իմ ի Տէր յանգուցեալ զՈվրեստէս քահանայ եւ զմայրն իմ զՍոփիայ, եւ ընդ այսր ողորմեսցի Ձեզ ամենեցուն ամենասուրբն Աստուած, պահեսցէ անվնաս իւրով մարդասիրութեամբն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից. ամեն: Գրեցաւ ի թուին աշխ. 821 Դ (1226) եւ յինդիկտ. ԺԴ., յամսեանն Մայիսի ա»<sup>22</sup>:

Վերլուծելով գրիչի մասին յիշատակագրութեան մէջ առկայ սուղ տեղեկութիւնները եւ համեմատելով յունարէն յիշատակարանում նրա օգտագործած ձեւակերպումները (օրինակ՝ սելջուկ սուլթանին վերագրուած տիտղոսը, նրանում տեղ

գտած սխալագրութիւնները, որոնք հաւանաբար արդիւնք էին յունարէնի ոչ այնքան լաւ իմացութեան) սուլթանական դիւանատնից դուրս եկած եւ քրիստոնեայ տիրակալներին ուղղուած այլ վաւերագրերի հետ՝ Դ. Կորոբէյնիկովը եզրակացրել է, որ Վասիլ գրիչը, որն ամենայն հաւանականութեամբ յունադաւան էր՝ քաղկեդոնական եկեղեցու հետեւորդ, ծառայել է սուլթանական դիւանատան Կեսարիայի գրասենեակում՝ որպէս Հայ գրագիրների քարտուղար՝ այլ կերպ ասած՝ գլխաւոր նոտար, ինչպէս յունարէն յիշատակարանում է՝ պրոտոնոտար (πρωτονοτάριος): Հետեւաբար, որոշ հիմքեր կան ենթադրելու, որ Կիլիկիոյ Հայոց արքաների հետ դիւանագիտական շփումը Ռումի իշխանութիւնները կարող էին ըստ անհրաժեշտութեան վարել նաեւ Հայերէնով՝ օգտագործելով իրենց դիւանատան Հայագրի եւ Հայերէնին տիրապետող ծառայողներին<sup>23</sup>: Այս ծառայողները կարող էին նաեւ թարգմանչական ծառայութիւններ մատուցել արքունիքին Հայագրի պատուիրակների ընդունելութեան ժամանակ:

Անշուշտ, չպէտք է մոռանալ, որ յիշատակարանի գրութեան ժամանակ իկոնիայում հոծ Հայկական Համայնք կար՝ իր եպիսկոպոսական աթոռով: Յայտնի է, որ 1203 թ. Սեբաստիայի արքեպիսկոպոս Անանիան (մահ. 1227 թ.), հրաժարուելով ընդունել Գրիգոր Զ. Ապիրատի (1194-1203

20 Հետաքրքիր է, որ Հ. Ն. Ակինեանի թարգմանութիւնից ընկել է բնագրում «մեծն սուլթան»-ին նախորդող «իմ սուրբ տիրակալ» (άγιος αὐθέντης) արտայայտությունը, որից մակաբերելի է, որ գրիչը յիշեալ սուլթանի ենթակայութեան կամ ծառայութեան ներքոյ էր:

21 Բնագրում 'Ρωμανίαν է՝ «Ռոմանիա», որն անվիճաբար կը լինէր «Ռում» կամ «Բիւզանդիա» թարգմանել: Սրանով իկոնիայի սելջուկեան սուլթանները նկատի ունէին նախկինում Բիւզանդիային պատկանած այն տարածքները, որոնք այժմ իրենց օրինական սեփականութիւնն էին համարում: Իկոնիայի սելջուկեան սուլթաններին վերա-

գրուած տիտղոսների մասին տե՛ս D. Korobeinikov, 'The King of the East and the West': The Seljuk Dynastic Concept and Titles in the Muslim and Christian Sources, in The Seljuks of Anatolia. Court and Society in the Medieval Middle East (այսուհետեւ՝ The Seljuks of Anatolia), ed. by A.C.S. Peacock & S. Nur Yildiz, I.B. Tauris, London-New York, 2013, pp. 68-90:

22 Հ.Ն. Ակինեան, Հայերէն յիշատակարան մը (ԺԳ. դարէ) յունարէն ատարանի մը մէջ, - «Հանդէս ամսօրեայ» (այսուհետեւ՝ ՀՄ), № 7 (յուլիս), 1908, էջ 220:

23 D. Korobeinikov, A Greek Orthodox, pp. 710-713.

թթ.) մահից յետոյ Հայրապետական իշխանութիւնը (1203-1220 թթ.) ստանձնած Յովհաննէս Զ. Սսեցուն, Ռումի սուլթան Ռուքն ալ-Դին Սուլէյման-Շահից հոգեւոր իշխանութեան տուչութիւն է խնդրել՝ ինքնահռչակուելով ոչ միայն Ռումի Հայրութեան, այլեւ Հայոց եկեղեցու հակաթոռ կաթողիկոս՝ նստավայր ունենալով Կեսարիան<sup>24</sup>:

Պատկեր 1. Gennadius MS. 1.5 ձեռագրի 166ա թերթի յունարէն յիշատակարանը

Պատկեր 2. Gennadius MS. 1.5 ձեռագրի 166բ թերթի Հայերէն յիշատակարանը

24 Իր տէրութեան սահմաններում հայոց եկեղեցու հակաթոռ կաթողիկոսութիւն ունենալու, անշուշտ, ձեռնարկ էր Ռումի իշխանութիւններին: Դա խարխուլ էր հայոց եկեղեցու միասնակամութիւնը, հետեւաբար եւ կարեւոր խաղաքարտ էր հայոց աշխարհիկ իշխանութիւնների հետ իրենց յարաբերութիւններում (Արքեպիսկոպոս Ամանիայի գործունէութեան մասին տե՛ս Հ. Պերպլերեան, Ամանիա հակաթոռ կաթողիկոս 1201-1211 (1223?), - «Սիոն», Երուսաղէմ, 1964 (հոկտեմբեր), էջ 286-289: Նոյնի՝ Ամանիա հակաթոռ կաթողիկոսի մահուան թուականը, - «Սիոն», Երուսաղէմ, 1965 (սեպտեմբեր), էջ 317-318, ինչպէս նաեւ վերջիններիս ֆրանսերէն թարգմանութիւնը՝ H. Berberian, Le patriarcat arménien du Sultanat de Roum, l'anti Catholico Anania, - "Revue des Études Arméniennes", t. 3, 1966, pp. 233-243): Իկոնիայի այս ժամանակուայ հայ համայնքի կեանքի եւ կարգավիճակի մասին ուշագրաւ տեղեկութիւններ կան ԺԳ. դարի մի անանուն հեղինակի «Վկայաբանութիւն թէղորոսի Կեսարացոյ» նախապատկերութեան մէջ, որում պատմում է Կեսարիայի բնակիչ թէղորոս անունով մի հայի մասին, ով մուսուլմանի ունեցած պարտքը չմարելու պատճառով դատարան է ընկնում: Մուսուլման կադին նրան պարտատրեցնում է վճարել պարտքը: Պարտապանի հալածանքներից ազատուելու համար նա ձեռակազմէ իսլամ է ընդունում, բայց լեռոյ հեռանալով Կեսարիայից՝ կրկին սկսում է ապրել որպէս քրիստոնեայ: Կեսարիայի մի մուսուլման անունով մէջ: Նրան ներկայացնում են սուլթան Ռուքն ալ-Դինին, ով իր հերթում էր նախկին իրաւասութեան ներքին հարցը դնում է կադիի իրաւասութեան ներքոյ: Վերջինս ոչ նուրբերով, ոչ ուկով, ոչ սպառնալիքներով իսլամ դառնալու հարցում ամբաստանելիս համոզել չկարողանալով՝ ի վերջոյ նրան դատապարտում է մահուան՝ քարվերջոյ նրան դատապարտում է մահուան՝ քարվերջոյ միջոցով (նախատակութեան օր՝ 1204 թ.

Բ. Իբն Բիբիի երկը. դեսպանը նկատութեան եւ դիւանագիտական ընծայաբերման վերաբերեալ տեղեկութիւնները

Հայ-սելջուկեան պաշտօնական գրագրութեան մասին որոշ ուշագրաւ փաստեր կարելի է քաղել Ռումի սելջուկեան սուլթանների պաշտօնական պատմիչ Նասիր ալ-Դին Հուսայն Իբն Բիբիի «Սելջուկեանմէ» կամ Al-Awāmir al-'Alā'iyya fi l-umūr al-'Alā'iyya<sup>25</sup> պարսկալեզու երկից: Իբն Բիբին իր երկը գրել է Իլխանութեան պատմիչ Ալայ ալ-Դին Ատա Մալիք Իբն Մուհամմադ

մայիսի 18): Այս մասին իմանալով՝ սուլթան Ռուքն ալ-Դինը թոյլ է տալիս Ամանիայից հողին յանձնել թէղորոսի մարմինը (քննակազմ բնագիրը տե՛ս Հայոց նոր վկայները (1155-1843), աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1903, էջ 73-93): Թէղորոս Կեսարացու վարքը տեղ է գտել նաեւ «Յայնամուրք» ժողովածոյում (տե՛ս Յայնամուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայնամուրք ՏԵՐ Իսրայէլի, ի տպ. Պօղոսի Արապեան Ապուշեյցոյ, Կոստանդնուպոլիս, 1834, էջ 224-225: Ուսումնասիրութիւնն ու ընդարձակ մատենագիտութիւնը տե՛ս P. Cowe, Martyrology of T'ëodoros Kesarac'i, - in Christian-Muslim Relations. A Bibliographical History, vol. 4 (1200-1350), ed. by David Thomas, Alex Mallett et al., Brill, Leiden-Boston, 2012, pp. 94-97: Ռումի հայութեան մասին տե՛ս նաեւ S.P. Cowe, "The Armenian community of the Konia region in the Seljuk period, - in Armenian communities of Asia Minor, ed. by R.G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, CA, 2014, pp. 89-106):

25 Իբն Բիբիի ժամանակագրութիւնը մեզ է հասել երկու տարբերակով՝ ամբողջական եւ համառոտ (Muhtasar): Երկի համառոտ տարբերակը 1902 թ. հրատարակել է Մ.Թ. Հասթանան, որը վերետում արդէն յղել ենք: Այս հրատարակութիւնից հայերին վերաբերող որոշ հատուածներ է քաղել եւ թարգմանել Հ. Մասսէն դեռ 1929 թ.: Տե՛ս H. Massé, Le Sultan Seldjoukide Keykobod Ier et l'Arménie (Documents Persans), - "Revue des Études Arméniennes", t. IX, fasc. 1, Paris, 1929, p. 113-129: Muhtasar-ը վերահրատարակուել է նաեւ թեհրանում Մ.Չ. Մաշքուրի կողմից: Տե՛ս Aḥbār salāḡeq Rūm bā-matn kāmél Moḥtaşar Salḡūq-nāme Ibn Bībī, be-ehthemām Moḥammad Ḡawād Maşkūr, Tehrān, 1971: Համառոտ տարբերակը գերմաներէն է թարգմանել Վ. Դուրան: Այդ հրատարակութիւնն արդէն ծանօթագրել ենք վերետում: Այս հրատար-

Ջուվայնիրի (մահ. 1283 թ.) յորդորով (այստեղից էլ երկիր վերնագիրը՝ «[ի կատարումն] Ալայ [ալ-Դին Ջուվայնիրի] կարգադրութիւնները՝ Ալայ [ալ-Դին Քայկուբադի] գործերի մասին»)։ Այն Իկոնիայի սուլթանների 1192-1280 թթ. իդէալականացում, դրուստական պատմութիւնն է։ Այս ժամանակագրութեան մէջ Հայ-սելջուկեան յարաբերությունների վերաբերեալ առկայ բաւական հարուստ նիւթից կարելի է եզրակացնել, որ թէ՛ Լեւոնի եւ թէ՛ Հեթումի օրօք դիւանագիտական ակտիւ շփում, երկուստեք դեսպանագնացութիւններ եւ նամակագրութիւն է եղել երկու պետութիւնների բարձրագոյն իշխանութիւնների միջեւ։ Հետագայ շարադրանքում ուշադրութեան կենտրոնում կը պահենք Իբն Բիբիի այն վկայութիւնները, որոնցում ուղղակի կամ անուղղակի տեղեկութիւններ կան Հայոց եւ Ռումի սելջուկ միապետների միջեւ պաշտօնական գրագրութեան, նամակագրութեան, դիւանագիտական առաքելութիւն-

ների եւ նուէրների փոխանակման եւ դրանց արարողակարգի վերաբերեալ՝ խուսափելով Հայ-սելջուկեան քաղաքական փոխյարաբերութիւնների բոլոր մանրամասներն ու ամբողջական պատկերը ներկայացնելուց։

Իբն Բիբիի երկում որոշ արժեքաւոր տեղեկութիւններ կարելի է գտնել դեսպանընկալութեան եւ հիւրընկալութեան Հայկական արարողակարգի մասին։ Վերջերս մեր աւագ գործընկեր Ռ. Շուքուրովը մեր համահեղինակութեամբ հրատարակուած մի ժողովածոյում հրատարակած յօդուածում Իբն Բիբիի երկի ամբողջական եւ համառօտ խմբագրութիւնների հիման վրայ կազմել է Հայ-սելջուկեան յարաբերութիւնների կարեւորագոյն իրադարձութիւնների ցուցակները՝ ի շարս այլ խնդիրների քննութեան առնելով նաեւ Հայոց միապետներից Ռումի սուլթաններին եւ սելջուկեան քաղաքական վերնախաւի առանձին ներկայացուցիչներին ուղղուած ընծաների մասին

րակութիւնից հայերին վերաբերող հատուածները քաղել ու հայերէն է թարգմանել Հ. Պ. Տէր-Պօղոսեանը։ Խօսքը, սակայն, ոչ թէ բառացի, այլ վերաշարադրական թարգմանութեան մասին է, որից տեքստի որոշ շատ կարեւոր մանրամասներ դուրս են մնացել։ Տե՛ս Հ. Պ. Տէր-Պօղոսեան, Հայաստան իբն Բիբիի համեմատ., - ՀԱ, 1960, № 4-6 (Ապրիլ-Յունիս), էջ 10-12, 162-177, № 10-12 (Հոկտեմբեր-Դեկտեմբեր), էջ 482-492։ «Սելջուկեամէ»-ի ամբողջական տարբերակի ֆաքսիմիլէ հրատարակութիւնն իրականացուել է միայն 1956 թուականին (նոյնպէս արդէն յղել ենք վերեւում)։ Մեկ տարի անց իրագործուել է նաեւ երկի առաջին կէսի շարուածքային հրատարակութիւնը (ընդգրկում է մինչեւ 1219 թ. իրադարձութիւնները), որից սոյն աշխատանքը գրելիս հնարատրութիւն չենք ունեցել օգտուելու։ Տե՛ս Ibn-i Bibi, *El-evamirü'l-'alâ'yye fi'l-umürü'l-'alâ'yye*, yayına hazırlayan N. Lugal, A.S. Erzi, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1957։ Մինչ օրս երկի ամբողջական տարբերակի լիակատար շարուածքային հրատարակութիւնը չկայ, ուստի օգտուել ենք ֆաքսիմիլէ հրատարակութիւնից՝ զուգահեռաբար ձեռքի տակ ունենալով նաեւ Մ.Թ. Հաութսմայի հրատարակած համառօտ տարբերակը։ Յատկանշական է, որ երկի ամբողջական տարբերակը մինչ օրս հազուադէպ է օգտագործուել

որպէս Կիլիկեան Հայաստանի պատմութեան սկզբնաղբիւր՝ թերեւս միայն Ա.Ն. Յիրիզի եւ Ռ. Շուքուրովի վերոյիշեալ աշխատանքներում, այն էլ՝ ոչ բոլոր մանրամասներով։ Սրա պատճառով երկը մինչ օրս մեզանում, ինչպէս հարկն է, արժեւորուած չէ, եւ նրա շատ հաղորդումներ անպատեմ հայագետներին։ Երկի հայերէն քաղուածական թարգմանութիւնն իսկական նուէր կը լինէր ոչ ուրի մասնագետներին։ Պէտք է նշել, որ մեզ է հասել նաեւ երկի ամբողջական տարբերակի օսմաներէն խմբագրութիւնը։ Սույնում Մուրադ Բ-ի (1421-1451 թթ.) օրօք եւ հաւանաբար վերջինիս յորդորով Եագիջի-օլլու (Եագիջի-գադէ) Ալին ձեռնամուխ է եղել սելջուկների պատմութեան շարադրանքը՝ գրելով իր *Tawārīh al-i Salğūq* («Սելջուկեան զարմի պատմութիւն») կամ («Օղուգ-նամէ») երկը։ Այս ժամանակագրութեան մասերից մեկն իբն Բիբիի երկի թարգմանութիւնն է՝ որոշ յաւելումներով եւ համառօտումներով՝ առանց հեղինակի անուն յիշատակութեան։ Այն նոյնպէս մասամբ հրատարակել է Մ.Թ. Հաութսման։ Տե՛ս *Recueil de Textes Relatifs à l'Histoire des Seldjoucides* par M.Th. Houtsma, vol. III, Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après Ibn-Bībī (texte turk), publié d'après les Mss. De Leide et de Paris, E.J. Brill, Leide, 1902։

վկայութիւնները<sup>26</sup>։ Ներքեւում, ի հարկէ, երկի՝ Հայ-սելջուկեան պաշտօնական նամակագրութեան եւ բանակցութիւնների մասին հաղորդումները<sup>27</sup> վերլուծելիս մենք նոյնպէս աչքաթող չենք անի նաեւ դիւանագիտական ընծաների մասին յիշատակութիւնները։ Հարկ է, որ ներկայացնենք Հայ-սելջուկեան դիւանագիտական շփումներում դիւանագիտական նուիրաբերման առանձնայատկութիւնները։ Նախ պէտք է նշել, որ ի տարբերութիւն Հայ-մամլուքեան յարաբերութիւնների՝ Ռումի սուլթանութեան հետ Կիլիկեան Հայաստանի հետ յարաբերութիւնները միշտ չէ, որ միանշանակ կերպով բնութագրելի են «ստորակայ» եւ «գերակայ» եզրոյթներով, անգամ երբ իր «հպատակութեան» հանգամանքը հայկական կողմը *de jure* չէր առարկում։

Ճիշտ է՝ քաջ գիտակցում ենք, որ *Al-Awāmir al-'Alā'iyā*-ն դինաստիական պատմութիւն է, եւ Իբն Բիբիի շատ յաճախ է տարուած սելջուկ սուլթանների գովաբանութեամբ, նրանց ուժի եւ հեղինակութեան պերճաշուք եւ չափազանցական նկարագրութեամբ, այնուհանդերձ, նրա բազմաթիւ հաղորդումներ Հայ-սելջուկեան յարաբերութիւնների մանրամասների մասին հաղորդող եզակի վկայութիւններ են, եւ դրանք բոլորն անարժանահաւատ համարելն էլ սխալ կը լինի։

Մի առանձին դէպքում, օրինակ, պարսկագիր պատմիչը գրում է Հայոց արքունիքում հիւրընկալուած սելջուկ սուլթանի մասին։ Բանն այն է, որ 1196 թ. Ռուքն ալ-Դին Սուլայման-շահը (1196 - 1204 թթ.) խլում է սուլթանութիւնն իր եղբորից՝ Ղիյաս ալ-Դին Քայխուրով Ա-ից (1192-1196 թթ., 1205-1211 թթ.)։ Քայխուս-

րովը ստիպուած է լինում լքել երկիրն ու «քաղաքական» ապաստան փնտրել հարեւան պետութիւններում՝ իր կորսուած իշխանութիւնը նորոգելու համար աջակիցներ հաւաքելու նպատակով։ Առաջինն, ով օթեւան է տալիս գահազուրկ սուլթանին, Հայոց իշխան Լեւոնն էր։ Քայխուսրովը, որին հայկական իշխանութիւնները, անշուշտ, դեռ օրինաւոր սուլթան էին համարում, պատուով է ընդունուում Կիլիկեան Հայաստանում՝ մեկ ամիս անցկացնելով Հայոց արքունիքում։ Իբն Բիբիի Լեւոնի կազմակերպած հիւրընկալութեան եւ երկու միապետների շփման մասին այսպէս է արտայտուում. «երբ Լեւոն թաքվարը սուլթանի բարեյաջող ժամանման լուրն առաւ, դուրս եկաւ՝ դիմաւորելու նրան մեծ յարգանքով եւ պատկառանքով, ինչպէս ծարաւ [մարդն] է դէպի ականակիտ ջուրը տենչում եւ կամ ինչպէս ծոմ պահողը, որ ցանկանում է կիսալուսնի պատկերը տեսնել։ Երբ նրա աչքը նկատեց նրա օրհնեալ հովանոցը, վար իջաւ իր երկվարից եւ շտապեց սուլթանին ներկայանալ։ Նա պատիւ ունեցաւ համբուրելու նրա ձեռքը, եւ նրա ամբողջ մարմինը մի պերճախօս լեզու դարձաւ՝ ցուցադրելու սուլթանի նկատմամբ իր ունեցած ակնածանքն ու հայցելու նրա ներողամտութիւնը։ Էլ չգիտէր՝ ինչ արտայայտութիւններով ազնուազարմ սուլթանին հաճոյանար։ Նա իր թագաւորութիւնում մեկ ամիս հիւրընկալեց սուլթանին։ Նա ամեն օր զուարճութիւններ էր կազմակերպում զբօսարան[ներ]ում։ Նա այնպիսի սեղաններ էր բացում հրաւէրքների ժամանակ, որ նրանց ճաշկերպների համբաւը տարածուեց Հայերի եւ հոռոմների երկրներում եւ քաղաքներում։

26 Տե՛ս P.M. Шукров, *Образ Киликийской Армении*, стр. 118-119, ինչպէս նաեւ նոյնի՝ *The Image of Cilician Armenia*, pp. 111-112.  
27 Երկից կատարուած քաղուածքների բարդագոյն հատուածների թարգմանութեան գործում մեզ սիրալիր կերպով օգնել է մեր աւագ գործընկեր

Քրիստինէ Կոստիկեանը, ինչի համար մեր անկեղծ երախտագիտութիւնն ենք յայտնում նրան։



թեան եւ պարտութեան մասին: Իրագեկեց նաեւ թագաւորութեան հանդարտեցման ու իզգալ-Դին Քայկաւուսին սուլթան հոչակելու մասին: Թագավար Լեւոնն ի պատասխան նրան մեծամեծ նուէրներ եւ ընծաներ ուղարկեց՝ արաբական եւ ֆրանկեան երկվարներ, ոսկեայ եւ արծաթեայ սպասք, մահուղէ կօշիկներ<sup>32»</sup><sup>33</sup>:

Այժմ որոշ նշանակալից կէտեր առանձնացնենք Իբն Բիբի վերոբերեալ հաղորդումներէր: Ուշադրութեան է արժանի դիւանագիտական ներկայացուցչին պաշտօնական ընդունելութիւնների համար նախատեսուած սրահում արքունի մեծամեծերի (որոշ դէպքերում գուցէ նաեւ հոգեւոր պետերի) ներկայութեամբ ընդունելու մասին պատմիչի ակնարկը: Ինչպէս պատուից կարելի է ենթադրել, որ պաշտօնական ընդունելութեան ծիսակարգի բոլոր անհրաժեշտ նորմերն ապահովելուց յետոյ օտարերկրեայ պատուիրակի հետ գաղտնի հաղորդակցման նպատակով հայոց արքան կարող էր դուրս հրահրել ներկաներին դահլիճից (բացառութեամբ թերեւս պետական գաղտնիքի հետ առնչուելու իրաւասութիւն ունեցող անձանց) եւ առանձնաւաւ իր հիւրի հետ: Հետաքրքիր է նաեւ երկուստեք երդմնագիրների տրման արարողակարգը: Սրանք, ըստ էութեան, հաշտութեան դրոյթների ընդունումը հաւաստելու նպատակով օգտագործուող գրութիւններ էին: Դրանցով կողմերն իրենց ստորագրութեամբ կամ կնիքով հաստատում էին իրենց համաձայնութիւնը բանակցութիւնների առարկայ հարցերի նկատմամբ՝ երդուելով հաւատարիմ լինել դրանց տառին եւ էութեանը:

Իբն Բիբիի երկում հայ-սելջուկեան դիւանագիտական հաղորդակցութեան մասին կան ոչ միայն անուղղակի վկայու-

թիւններ, այլեւ որոշ վաւերագրային նիւթ օրինակ, Ռումի սուլթանին հայոց արքայից յղուած գրութիւններից իրական քաղուածքներ կամ դրանց բովանդակութեան վերաշարադրանքներ: Հեղինակը, ճիշտ է, սելջուկեան արքունիքին մօտ կանգնած մարդ էր, եւ շատ հնարաւոր է, որ նրան հասանելի լինէին սուլթանական դիւանի արխիւները: Այնուամենայնիւ, յիշեալ քաղուածքների վաւերութիւնն ու իսկութիւնն ապացուցելու ծանրակշիռ փաստեր չունենք, եւ դժուարանում ենք ասել, թէ հեղինակը երկրորդային աղբիւրների (ականատեսներ, ինֆորմատներ) հիման վրայ է վերականգնել պատմական փաստաթղթերի մօտաւոր բովանդակութիւնը, թէ դրանք իրականում ձեռքի տակ է ունեցել եւ օգտագործել իր երկը գրելիս: Ներկայացնենք պատմիչի երկում վկայաբերուած՝ Հայոց արքայ Լեւոնից Քայկաւուս Ա-ին հասցէագրուած մի նամակի նախապատմութիւնը:

Այսպէս, խաղաղութիւնը հայ-սելջուկեան յարաբերութիւններում, հակառակ կողմերի տուած երդման, ձգուած է հազիւ մինչեւ 1216 թ.: Ըստ Իբն Բիբիի՝ այդ թուականին սելջուկ հարկահաւաքները (*muhaşşilān wuğūh ħarāğ Sīs*) բողոքում են սուլթանին, որ հայոց արքան հրաժարուած է վճարել հարկերը<sup>34</sup>: Միայն թէ սա ընդամենը պատրուակ էր Կիլիկիա ներխուժելու համար: Իրական պատճառը թերեւս այն էր, որ հայոց արքան այդ թուականի փետրուարին երկրորդ անգամ գրաւել էր Անտիոքը եւ Բոհեմունդ Դ-ի փոխարէն գահին նստեցրել Ռուբեն-Ռայմոնդին: Իրագարծութիւններն այդուհետեւ գրեթէ նոյն ուղեգծով են զարգանում, ինչպէս տարիներ

32 Տե՛ս Ռ. Շուրուրովի բացատրութիւնը (տե՛ս P.M. Шукуров, *Образ Книжкүйскою Армении*, с. 119, сн. 115):

33 Տե՛ս Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 119 եւ հմմտ. Ibn Bībī, *Muhtaşar*, §. 44:

34 Տե՛ս Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 162 եւ հմմտ. Ibn Bībī, *Muhtaşar*, §. 60:

առաջ՝ Անտիոքի առաջին գրաւումից (1208 թ.) յետոյ<sup>35</sup>:

Անսալով իշխանութիւնից զրկուած Բոհեմունդ Դ-ի օգնութեան կոչին եւ հաւանաբար իրենք էլ վախենալով հայոց թագաւորութեան յետագայ հզօրացումից՝ Լեւոնի դէմ միասնական ճակատով հանդէս գալու ռազմական նախաձեռնութիւն են մշակում Հալէպի սուլթան ալ-Մալիք ալ-Չահիրը եւ Իկոնիայի սուլթան Քայկաւուսը<sup>36</sup>: Ալ-Մալիք ալ-Չահիրի հօրեղբայր եւ բոլոր Այիւբեանների մէջ գերագահ եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլը, ով հայոց Լեւոն թագաւորի հետ վաղուց ի վեր բարեկամական յարաբերութիւններ եւ նամակագրութիւն ունէր, հաւանութիւն չի տալիս Հալէպի միջամտութեանը<sup>37</sup>: Ալ-Մալիք ալ-Ադիլի դիրքորոշումը կապում է ալ-Մալիք ալ-Չահիրի ձեռքերը: Հալէպում

չիկացած կրքերը վերջնականապէս հանդարտեցնելու նպատակով հայոց արքան ալ-Մալիք ալ-Ադիլից յետոյ նամակ է ուղարկում նաեւ ալ-Չահիրին՝ մի փառահեղ նուէրի հետ մեկտեղ՝ շահելով նրա վստահութիւնը<sup>38</sup>:

Աւելի նախաձեռնող է գտնուում սուլթան Քայկաւուսը, ով շուտով պատերազմ է սանձաղծում Կիլիկեան Հայաստանի դէմ՝ պաշարելով Կապան բերդը: Ըստ Հայկական աղբիւրների՝ Հայոց բանակը սկզբում որոշ յաջողութիւններ է ունենում: Կապանի պաշտպանները՝ բերդատէր Լեւոնի գլխաւորութեամբ, անգամ կարողանում են դուրս գալ եւ կրակի տալ թշնամու բանները: Սակայն Կոստանդին Գունդստարի գլխաւորութեամբ հայկական զօրքերը մարտավարական սխալ են թոյլ տալիս թշնամու զգալիօրէն գերազանցող բանակի

35 Այս մասին տե՛ս A.-M. Eddé, *La Principauté Ayyoubide d'Alep (579/1183-658/1260)*, Franz Steiner Verlag Stuttgart, 1999, p. 83; Վ. Տեր-Ղեւոնդեան, *Կիլիկեան Հայաստանը եւ Այիւբեան պետութիւնները (1171-1260 թթ.)*, «Տիր» հրատ., Երեւան, 2017, էջ 153-164: Իսկ 1216 թ. դէպքերի մասին տե՛ս Cahen Cl., *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Geuthner, Paris, 1940; p. 628-633, նոյնի՝ *La Turquie*, p. 71-72; A.-M. Eddé, *La Principauté*, p. 83-84; S.N. Yildiz, *Reconceptualizing*, pp. 101-104; P.M. Шукуров, *Образ Книжкүйскою Армении*, с. 119; Վ. Տեր-Ղեւոնդեան, *Կիլիկեան Հայաստանը*, էջ 165-181:

36 Ըստ Իբն վասիլի՝ Անտիոքը գրաւելուց յետոյ Լեւոնը մեծաթագաբար գերեվարուած մուսուլմաններին ուղարկել է Հալէպ: Նրա այս քայլը բարձր է գնահատուել մուսուլմանական միջավայրում, եւ իր դերն է ունեցել դէպքերի ճետագայ հանգուցալուծման ժամանակ: Պատմիչը նաեւ գրում է, որ Ռայմոնդ-Ռուբենին Անտիոքի գահին նստեցրելուց յետոյ, հայոց թագաւորը շտապել է Կիլիկիա, որովհետեւ վախենում էր սուլթան իզգալից: Տե՛ս Ibn Wāṣil, *Mufarriğ al-kurūb fi aḥbār banī Ayyūb*, §. 3, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Makaba al-'Aşriyya, Şaydā-Bayrūt, 2004, §. 233: Ըստ նոյն ճեղհակի Քայկաւուսը նամակ է ուղարկել ալ-Մալիք ալ-Չահիրին՝ առաջարկելով իրեն միանալ Մարաշում, որպէսզի միասնաբար արշաւեն հայոց երկրի վրայ: Ի վեր-

ջոյ որոշուել է, որ Իկոնիայի սուլթանը Կիլիկեան Հայաստան պիտի մտնի Մարաշի, իսկ Հալէպի սուլթանը՝ Դարպակի կողմից (տե՛ս անդ, §. 234):

37 Նոյն տեղում:

38 Իբն վասիլը հաղորդում է նամակի բովանդակութիւնը. «Ես սուլթանի ստրուկն եմ, նրա պետութեան մի տնկի: Ես նրա մօտ եմ մտնում որպէս արաբ եւ խնդրում նրանից ինձ ազատել այս ծանր դրութիւնից: Ես միշտ նրա ծառան եմ, քանի դեռ կամ, եւ քանի՛ անգամ եմ պաշտպանել սուլթանի երկիրը եւ ծառայել նրան: Չոր օրինակ, երբ սուլթանը՝ օղակել էր Դամասկոսն առաջին անգամ, եւ նրա երկիրը լիովին դատարկուել էր զօրքերից, եւ նրա սրտին նեղութիւն չտուեցի եւ չտանցեցի նրա երկիրն, այլ օգնեցի եւ օժանդակեցի գումարով եւ իմ գինականներով: Նոյնպէս եւ երբ Դամասկոսը երկրորդ անգամ է պաշարուել, ինձ գումարներ էին առաջարկուել, որպէսզի ես զբաղեցնեմ նրան եւ շեղեմ պաշարումից, բայց ես չեմ արել: Եւ եթէ պրիցը (իմա՛ Բոհեմունդ Դ-ը) ծառայութիւն է մատուցել սուլթանին, իմ մատուցած ծառայութիւնն աւելի է, քան նրանը, եւ սուլթանն իր ազնի հպեցողութեամբ պիտի նկատի իմ ծառայութիւնն ու ջանքը: Ես նաեւ իմ քեռորդուն, ում նշանակել եմ Անտիոքում, պատուիրել եմ նրա ծառայութեան պարտաւորութիւն ստանձնել» (Տե՛ս Ibn Wāṣil, *Mufarriğ al-kurūb*, §. 3, §. 235):



տուրանը<sup>48</sup>): Մեզ ներքին համարէք Ձեր առատաձեռնութեան եւ Ձեր սեփական մեղքի թողութեան անհրաժեշտութիւն:

Ճշմարիտ է, որ եթէ աշխարհի տէրը Սսի երկիրն ինձանից ստանայ, տալու է իր պետութեան ծառաներից մեկ ուրիշին: Եթէ Դու ինձ համարում ես քո ծառաներից ամենանուաստը, ապա ես ամենայն ազնուութեամբ ստրկութեան օղ եմ անում ականջիս եւ բարձրացնում Հնազանդութեան լուծը: Երկրի տիրակալի շնորհի ձայներն ինձ հաճելի կը համարեմ: Կրկնապատկում եմ [իմ կողմից վճարուելիք] հարկը: Ամեն տարի, արդէն իսկ ընդունուած կարգից եւ պայմանաւորուածութիւնից դուրս, ես կ'ողարկեմ Ձեզ 500 Հեծեալներ՝ իրենց ասպազէնով, որպէսզի կռուեն այնտեղ, որտեղ անհրաժեշտ կը համարէք<sup>49</sup>: [Աւելին] ես կը կատարեմ բոլոր առաջադրանքները՝ կարողութեան եւ կարելիութեան սահմաններում, ես քեզ հաւատարիմ կը լինեմ, ինչպէս կէտը շրջանի կենտրոնում: Ես արձանագրում եմ քո հրամանն իմ գոյութեան<sup>50</sup> էջին»<sup>51</sup>:

Հետաքրքիր է նամակում Ղուրանից կատարուած մէջբերումը: Եթէ իսկապէս

նամակի բովանդակութեան այս ձեւակերպումը յորինուած է Իբն Բիբիի կողմից, եւ եթէ սա քաղուածք է իրականում գոյութիւն ունեցած նամակից, ապա հակառակորդին իր իսկ սուրբ գրքով համոզելու այս հանգամանքը խօսում է ոչ միայն Լեւոնի բանակցային հնարամտութեան, այլեւ հայոց դիւանատան «արհեստավարժ աշխատանքի» մասին:

Բանակցութիւնները յաջողութեամբ են աւարտուում: Համաձայնագրի կնքումից յետոյ (1218 թ.) Կոստանդին Գոլնդատաբլի գլխաւորութեամբ ազատ են արձակուում հայոց գերեվարուած իշխանաւորները՝ սուլթանի կողմից ընծաների արժանանալով<sup>52</sup>: Ըստ Սմբատի՝ հայ ազնուականները գերութեան մէջ են անցկացրել 1 տարի եւ չորս ամիս<sup>53</sup>:

Հայոց արքայի «հնազանդեցումից» որոշ ժամանակ անց՝ 1218 թ., Քայկաւուս Ա-ն ռազմական գործողութիւններ է սկսում Հալեպի սուլթանութեան դէմ<sup>54</sup>: Նա, ըստ ձեռք բերուած պայմանաւորուածութեան, օգնական ուժեր է պահանջում նաեւ հայոց արքայից: Այս դէպքերի մասին ուշագրաւ մանրամասներ են հաղորդում Միխայէլ Ա-

րեանց, Փարիզ, 1859, էջ 118, ինչպէս նաեւ Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, աշխատասիրութեամբ Լ. Սերովյէ Ազնլեանի, Վենետիկ, 1956, էջ 222 եւ Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն*, էջ 520: Հմմտ. Առյճի՝ (1871), էջ 513; Սամուէլ Անցի եւ շարունակողներ, *Ժամանակագրութիւն*, աշխատասիրութեամբ Կ. Մաթեոսեանի, «Նաիրի», Երեւան, 2014, էջ 238; Կ. Մաթեոսեան, *Հեթում պատմիչ Կողկոսցիի եւ Արա ժամանակագրութիւնը*, Երեւան, 2011, էջ 50 (այսուհետեւ՝ Հեթում Պատմիչ, ժամանակագրութիւն):

53 Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 118:

54 Այս դէպքերի մասին մանրամասն տե՛ս Cl. Cahen, *La Turquie*, p. 72-73; R.S. Humphreys, *From Saladin to the Mongols: The Ayyubids of Damascus, 1193-1260*, State University of New York Press, Albany, 1977, pp. 159-160; A.-M. Eddé, *La Principaute*, p. 90-92 եւ յատկապէս Վ. Տէր-Ղեւոնդեան, *Կիլիկեան Հայաստանը*, էջ 175-180:

սորու ժամանակագրութեան հայկական խմբագրութիւնները: Երբ սելջուկեան զօրքերը գրաւում են Ռաբանը, Թել Բաշիրը եւ Այնթապը, Հալէպի սուլթանի գահին նստած անհափազաս Մելիք Ազիզի խնամակալ (աթաբեկ) Շիհաբ ալ-Դին Տուղրիլը, զգալով վերահաս վտանգը, դիմում է Լեւոնին օգնութեան խնդրանքով: Լեւոնը Հնարք է բանեցնում սուլթանի նկատմամբ: Ասորի պատմիչի հայ շարունակողները վկայաբերում են քաղուածք հայոց արքայից Քայկաւուսին ուղղուած նամակից. «Եւ թագաւորն Հայոց այնուհետեւ ի հոգս անկեալ իւրով կորովամիտ իմաստութեամբն. առաքեաց զանխլաբար առ Սուլտանն Հոռոմոց, մինչ ի սահմանս Թլպաշարայ էր, գրեալ առ նա այսպիսի օրինակաւ. «Թագաւոր Հայոց Լեւոն. եղբօր մերոյ Քեքայուզ Սուլտանիդ ի Տէր խնդալ: Յուշ լիցի քեզ իբրեւ սիրելոյ մերում, զի իմացեալ հաստատեցաք. եթէ քառասուն ամիրայ ի զօրաց քոց դաշինս եղեալ են տալ զքեզ ի ձեռն Աշրափուն: Եւ դուն այսուհետեւ զօգուտ անձին քո խորհեաց, զի մի անկցիս ի ձեռս ատելեաց քոց, ողջ լեր»<sup>55</sup>: Երբ այս նամակն ընթերցում են սուլթանի համար, նա վախենում է եւ հրամայում իր զօրքին Հետ դառնալ՝ կորցնելով գրաւած բերդերը: Իսկ երբ Կեսարիա է հասնում, կարգադրում է մահապատժի ենթարկել ղաւաճանութեան մէջ ամբաստանող էմիրներին: Իսկ սուլթանի «ասորիքեան արշաւանքն» այդպէս էլ իր լրմանը չի հասնում, չնայած արաբ պատմիչները ռազմարշաւի ընթացքի եւ դէպքերի հանգուցալուծման այլ փոքր-ինչ տարբերուող պատումներ են պահպանել<sup>56</sup>:

Սուլթանին ուղղուած «կեղծ» նամակների մասին խօսում է նաեւ Իբն Բիբին, թէեւ դրանք ոչ մի կերպ չի կապում Լեւոնի

անուան Հետ: Ըստ նրա՝ Հալեպցիները Ռումի մի բնակչի էին բռնել, որը գիտէր սուլթանութեան բոլոր էմիրների անունները եւ վերջիններին անունից ալ-Մալիք ալ-Ադիլի որդի ալ-Մալիք ալ-Աշրափին ուղղուած շինծու նամակներ պատրաստել: Այդ նամակներում Ռումի էմիրներն իբր իրենց հաւատարմութիւնն էին յայտնում ալ-Աշրափին եւ իբր նախապատրաստուած էին գահընկէց անել սուլթան Քայկաւուսին: Կեղծ նամակները հասցուել էին սուլթանին, ով, կարդալով դրանք, վախեցել է իր կեանքի համար եւ որոշել է Հետ նահանջել՝ օր առաջ խեղդելու իր դէմ պատրաստուող խռովութիւնը: Հնարքն աշխատել է, եւ սուլթանը, հաւատ չընծայելով նամակներում յիշատակուած էմիրների արդարացումներին, հրամայել է դաժանօրէն սպանել «ղաւաճաններին»՝ ողջ-ողջ այրելով: Բայց յետոյ, ճշմարտութիւնն իմանալով, նա խիստ զղջացել է իր արածի համար եւ ծանր հիւանդանալով՝ կնքել մահկանացուն<sup>57</sup>:

Այսպիսով, չնայած Իբն Բիբին միջադէպին հայոց արքայի ներգրաւուածութեան մասին չի խօսում, Միքայէլ Ասորու հայկական խմբագրութիւնների եւ Իբն Բիբիի պատումներն ակնյայտօրէն ընդհանուր գծեր ունեն: Հետեւաբար շատ հնարաւոր է, որ խաբուսիկ այս քայլը Լեւոնի եւ Շիհաբ ալ-Դին Տուղրիլի համատեղ մտալցացումն էր, մինչեւ որ եփպտոսից օգնութեան կը հասնէր ալ-Մալիք ալ-Աշրափը: Հայոց թագաւորի եւ Հալէպի Այիւբեանների միջեւ համագործակցութեան այս միջադէպը վկայում է, որ Ռումի սուլթանութիւնից Լեւոնի յայտարարած կախումն իրականում հիմնաւոր չէր: Չէ՞ որ նոյն կերպ Հայոց արքան ճանաչել էր Հալէպի սուլթանի գերակայութիւնը: Դրանով նա ընդամենը երկդիմի դիւանագիտութեան նուրբ թելերով խճճել էր Ռումի սուլթանութիւն - Հալէպի Այիւբեան

րեան, *Կիլիկեան Հայաստանը*, էջ 177, ծմբ. 423:

56 A.-M. Eddé, *La Principaute*, p. 90-92.

57 Տե՛ս Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 182-199 եւ հմմտ. Ibn Bībī, *Muhtasar*, §. 72-82:

55 Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն* (1870), էջ 521-522: Հմմտ. Առյճի՝ (1871), էջ 514: Վ. Տէր-Ղեւոնդեանի աչքից վրիպել է, որ անակի վերաբերեալ հատուածն ակապ է նաեւ երկի 1871 թ. հրատարակութեան մէջ: Հմմտ. Վ. Տէր-Ղեւոնդեան

սուլթանություն - Անտիոք-Տրիպոլիսի իշխանապետություն եռեակ դաշինքի անդամներին եւ անգամ խարխուլ նրանց միասնականությունը առաջ տանելով իր քաղաքական շահերը:

Հայ-սելջուկեան յարաբերությունների հերթական ճգնաժամը տեղի է ունենում 1225 թ. վերջերին: Ալայ ալ-Դին Քայկուբատ Ա-ը (1220-1237 թթ.), ում օրոք Ռումի սուլթանությունը հասել է իր հզորության բարձրակետին: Նրա օրոք սելջուկեան պետությունը դարձել է տարածաշրջանի հզորագույն քաղաքական դերակատարներից մեկը՝ ծաւալապաշտական նկրտումներ ունենալով իր հարեւաններին՝ այդ թվում Կիլիկեան Հայաստանի նկատմամբ: Դեռ 1221 թ. Քայկուբատի հրամանով գրաւուում է հայազգի յուճաղաւան իշխան Կիւ Վարդին պատկանող Կալոնորոս ծովային բերդը եւ սուլթանի անունով վերանուանում Ալաիյայ (այժմ՝ Ալանայ): Կիւ Վարդը կորցրած բերդի փոխարէն որպէս տիրոջ ստացաւ Ակչեհիրը, ինչպէս նաեւ իր դստերից մեկին կնուծեան տուեց սուլթանին: Եւ հաւանաբար հէնց նա էր աղբւրներում սուլթանի «Մահ Փէրի-Նաթուն» պարսկական անունով յիշուած կինը, ով ծնունդ է տուել ապագայ սուլթան Ղիյաս ալ-Դին Քայխուրով Բ-ին (կառ. 1237-1246 թթ.)<sup>58</sup>:

Հայոց թագաւորութեան դէմ ուղղուած արշաւանքը Քայխուրով Բ-ի միանձնեայ որոշումը էր: Նրա այդ քայլը համաձայնեցուած էր Անտիոքի պրինց Բոհեմունդ Դ-ի հետ, ում հետ դաշնակցային յարաբերությունների մէջ էր: Սակայն, ինչպէս նախկինում, այս անգամ էլ համատեղ ուժերով բացարձակ առաւելութեան հասնել Կիլիկեան Հայաստանի նկատմամբ չի յաջողուել: Աւելին, արաբալեզու աղբւրներում տեղեկութիւններ կան, որ այս անգամ Հալէպի սուլթանությունը՝ ի դէմս աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուղրիլի, արձագանգել է հայկական իշխանությունների օգնութեան կոչին եւ զինական աջակցություն է ցոյց տուել Կիլիկեան Հայաստանին Բոհեմունդ Դ-ի դէմ պայքարում<sup>59</sup>: Սա գուցէ եւ երախտալից հատուցումն էր այն աջակցութեան, որ ժամանակին հալեպցիները Լեւոն արքայից էին ստացել:

Այս անգամ Կիլիկեան Հայաստանի բերդերի դէմ արշաւած սելջուկեան բանակն առաջնորդում էին էմիր Մուբարիզ ալ-Դին էրթուկուշը եւ ազգութեամբ յոյն սելջուկահպատակ էմիր «Քումնինուս»-ը (Մաւրոզում Կոմնենոս)<sup>60</sup>: Ըստ Իբն Բիբի սելջուկեան զօրքերն օղակում են Ճանճի (բնագրում՝ Ganğin) բերդը, որի պաշտպանները՝ իրենց բերդատիրոջ գլխաւորու-

58 Այս մասին տե՛ս Cl. Cahen, *La Turquie*, p. 74-75; S.N. Yildiz, *Reconceptualizing*, pp. 106-107; P.M. Шукuroв, *Образ Киликийской Армении*, с. 98-101: Մահ Փէրի-խաթունի մասին տե՛ս A. Eastmond, "Gender and patronage between Christianity and Islam in the thirteenth century", in *First International Byzantine Studies Symposium Proceedings*, Istanbul 25-28 June, 2007, Istanbul, 2010, pp. 78-79; Cl. Mutafian, *L'Arménie du Levant (XIIe-XIVe siècle)*, Les Belles Lettres, Paris, 2012, p. 134-135: Կիւ Վարդի եւ ճրա դստեր յունական ծագման վարկածի մասին տե՛ս Cl. Cahen, *La Turquie*, p. 74 եւ յատկապէս՝ R. Shukurov, *Harem Christianity: The Byzantine Identity of Seljuk Princes*, in *The Seljuks of Anatolia*, p. 117, 136-137: Ռ. Շուքուրովը վերջերս կատարած իր մի հետազոտութեան մէջ փոխել է իր տեսակէտը՝ ասելի հակումով լինելով ճրա հայ լինելու մտքին (տե՛ս

P.M. Шукuroв, *Образ Киликийской Армении*, с. 98-101):  
59 Վ. Տէր-Ղեոնդեան, *Կիլիկեան Հայաստանը*, էջ 185-188:  
60 Հայկական աղբիւրները խիստ սակաւախօս են այս արշաւանքի եւ արդիւնքում կնքուած հաշտութեան պայմանագրի մասին: Արշաւանքի մասին տե՛ս Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն* (1871), էջ 525-526, ինչպէս նաեւ Անյոն (1871), էջ 518-519 (հաղորդում են Մաննի, Կանչի եւ Մազոս խաչ բերդերի գրաման մասին); Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 119; Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանեանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 190: Տե՛ս նաեւ Cl. Cahen, *La Turquie*, p. 75; S.N. Yildiz, "Reconceptualizing", pp. 108-109; P.M. Шукuroв, *Образ Киликийской Армении*, с. 102-103:

թեամբ, ով ըստ պարսկագիր պատմիչի վանական (kašiš) էր, նամակ են յղում «Լիֆուն թագավարին»<sup>61</sup>՝ նրանից օգնութիւն խնդրելով: Վերջինս իր հերթին նամակներ է գրում եւ աջակցութիւն խնդրում «ծովափնեայ ֆրանկներից»<sup>62</sup>. «Եթէ դուք այսօր իսկ օգնութիւն չառաքէք, այստեղ այլեւս քրիստոնէական կրօն չի լինի»: Սակայն սելջուկեան զօրքերին լուրջ դիմադրութիւն ցոյց տալ եւ բերդը շրջափակման օղակից դուրս բերել չի յաջողում: Բերդի բնակիչները ստիպուած են լինում «անվտանգութեան երաշխիք» խնդրել Մուբարիզ ալ-Դինից: Վերջինս չի մերժում, որից յետոյ ձեռնամուխ է լինում շրջակայքի միւս բերդերի գրաւմանը: Ժամանում են Հայոց դեսպանները՝ զինադադար խնդրելու: Իբն Բիբին հաղորդում է նամակի բովանդակութիւնը, որը շատ նման է թվում Լեւոնի կողմից 1216 թ. ուղարկուած նամակին. «Եթէ փառիշաճը մտադրութիւն ունի պատժել գործած յանցանքի համար, ապա հպատակ մեղսագործին քո մեծաթիւ զօրքից բաժին հասած պատիժն արդէն իսկ բաւարար է: [Սուլթանն] այսպէս թէ այնպէս թողնելու է այս երկրի կառավարչութիւնն ու իշխանութիւնն իր ծառաներից մեկի ձեռքին, ուստի թոյլ տուր ինձ լինել այդ հաւատարիմ եւ նուիրուած ծառան: Ամիրայապետը (բնագրում՝ malik umarā', իմա՝ Մուբարիզ ալ-Դինը) մոռցնել է մեր օրը հոգեմաշ քինախնդրութեամբ (be-kān-e ḡānfarsāy): Բոլորիս վիճակը բարելաւելու համար անհրաժեշտ է, որ քո անծայրա-

ծիր ողորմածութեան շնորհն անես: Կարճ ասած՝ ամեն տարի 1000 հեծեալ եւ 500 աղեղնաւոր՝ իրենց ծախսով, կ'ուղարկեմ տիրակալին՝ ի ծառայութիւն, դրամներ[ս] կը հատեմ երջանիկ տիրակալի յաջողակ տիրադոսներով՝ սովորականի պէս պատուելով, կը կրկնապատկեմ հարկը եւ առանց յապաղման եւ ձգձգման [սուլթանական] հարուստ գանձարան կ'ուղարկեմ»<sup>63</sup>:

Սելջուկ զօրահրամանատարը «թագավարի» նամակն իր բանագնացի միջոցով ուղարկում է սուլթանին: Եւ մինչ դիտարկուում էր հայկական իշխանութիւնների առաջարկը, Մուբարիզ ալ-Դինը շարունակում է իր նուաճումները՝ ըստ Իբն Բիբիի գրաւելով մօտ 40 բերդ (այդ թվում՝ Մանաւադը, Անդուշթան, Սիկը, Անամուրը եւ այլն): Սուլթանն ընդունում է հայկական կողմի հաշտութեան առաջարկը եւ հնազանդութեան խոստումը: Փոխադարձ դեսպանագնացութիւններն աւարտուում են զինադադարի պայմանագրի կնքմամբ (1226 թ.)<sup>64</sup>: Միքայէլ Ասորու ժամանակագրութեան հայկական խմբագրութիւններից մեկում Հայ-սելջուկեան հաշտեցման առիթով կարդում ենք. «Ի թուին Հայոց Ռէշ (675, իմա՝ 1226 թ.) միաբանութեամբ ամենայն իշխանացն տուին զՁապէլ դուստր Լեւոն թագաւորին ի կնութիւն Հեթմոյ որդւոյ պարոն Կոստանդեայ, եւ թագաւորեցուցին ի վերայ Հայոց, որ էր տղայ հասակաւ. եւ հայր նորա կարգաւորէր զթագաւորութիւն, որ եւ արար սէր ընդ Ալադին սուլտանն եւ հնազանդեցաւ նմա՝ տալով

61 Այսպէս սխալով է բնագրում: Նկատի է առնուած կամ Հեթում արքան կամ Կոստանդին Պայլը:  
62 Ռ. Շուքուրովը վերջերս դժուարացել է վերծանել Ռ. Բիբի երկի (պատկեր 5) հատուածը: Մեր կարծիքով հարկատու է այսպէս կարդալ՝ "فردنگان" "نوی و فریران وانطاک و یغراس سواح" "այսինքն՝ «ծովափի, ինչպէս նաեւ Բաղրասի եւ Անտիոքի ֆրանկներին, տաճարական ասպետներին»: Բանն այն է, որ Տաճարական հոգեւոր-ասպետական միաբանութիւնը մուսուլմանական աղբիւրներում Dāwīyya էր կոչվում, իսկ firān բառի տակ պետք

է հասկանալ հին ֆրանկերէնի freres-ը («եղբայրներ», եզ. frère): Յատկանշական է, որ ժամանակի հայկական աղբիւրները Անյապէս փոխառել են այդ բառը «ֆրեթը» յոգնակի ձեւով՝ Ակատի ունեալով հոգեւոր-ասպետական միաբանութիւնների անդամներին: Բառը փոխառել են նաեւ ասորի մատենագիրները:  
63 Տե՛ս Ibn-i Bibi, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 341 եւ հմմտ. Ibn Bibi, *Muhtaşar*, §. 141:  
64 Տե՛ս Ibn-i Bibi, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 334-343 եւ հմմտ. Ibn Bibi, *Muhtaşar*, §. 138-142:

նմա յամենայն ամի երեք հարիւր այր ի ծառայութիւն»<sup>65</sup>: Հեթումի հնազանդութիւնը Քայկուբադ Ա-ի իմաստնութեան դրսեւորում է համարում Սմբատ Սպարապետը. «Իսկ պարոն Կոստանդին պայլն զի խելօք էր՝ իմաստութեամբ անցոյց զաւուրքն. եւ իւր թապտրովն էառ ի վերայն հարկ որ տայ ամեն տարի հեծեալ ի ծառայութիւն չորս հարիւր մարդ: Եւ զինչ գտնոյր Ֆուանկցի օժտնի՝ նա քնքշեցնէր»<sup>66</sup>:

1226 թուականի հաշտութիւնը տեւական՝ մօտ տասնութամեայ խաղաղութիւն է հաստատում Ռուսի սուլթանութեան եւ Կիլիկեան Հայաստանի յարաբերութիւններում: Սրա պատճառն այն էր, որ հայկական իշխանութիւնները՝ ի դէմս Հեթում արքայի եւ Կոստանդին Պայլի իրենց «ստորակայական» կարգավիճակի վերաբերեալ կասկածներ չէին յարուցում սելջուկների մօտ՝ պարբերաբար մասնակցութիւն բերելով սուլթանի ռազմական ձեռնարկումներին<sup>67</sup>:

Հայ-սելջուկեան դիւանագիտական յարաբերութիւններում դրամատիկ իրադարձութիւններով եւ փոխադարձ դեսպանագնացութիւններով լի շրջան էին 1243-1245 թուականները: Ըստ Իբն Բիբիի՝ Ղիյաս ալ-Դին Քայխուրով Բ-ը, ստանալով մոնղոլ զօրավար Բաչու (Բայջու) նոյինի

կողմից Կարինի (Էրզրումի) առման մասին լուրը, փորձել է իր դաշնակից կամ իր ազդեցութեան տակ գտնուող երկրներից զօրքեր հաւաքել մոնղոլներին դիմակայելու համար: Նա դեսպանութիւններ է ուղարկել նաեւ «Սսի պայլին» (նկատի է առնուած կամ Հեթումը կամ Կոստանդին Պայլը) եւ մեծ դրամական շնորհի (100 հզ. դինար եւ մի քանի միլիոն դիրհամ) եւ Հերակլեան հայոց թագաւորութեանը յանձնելու դիմաց Ֆրանկ վարձկանների օժանդակ զօրքերով իրեն օգնութեան հասնելու «պահանջով» դիմել: Սուլթանի առատաձեռն նուէրն աւելի շատ կաշառքի տպաւորութիւն է տալիս՝ վկայելով, որ Սսի «անվերապահ հպատակութիւնը» Ռուսիին ընդամենը պատրանք էր: Քայխուրով Բ-ը, փաստօրէն, օգնական ուժեր էր գնում կամ վարձում իրեն հաւատարմութեան երդում տուած հարեւաններից: Ինչեւէ, սուլթանի հարցմանն ի պատասխան «Սսի պայլը» վերահաստատել է իր հնազանդութիւնը<sup>68</sup>:

Իսկ ըստ Բար Հեբրէոսի՝ Կոստանդին պայլն անձամբ Կեսարիա է գնացել, որտեղ սուլթանն ընդունել է նրան մեծ պատուով եւ շնորհներով ու մոնղոլների դէմ պատերազմում իրեն օգնելու խոստում ստացել<sup>69</sup>: Այն, որ ի շարս Փոքր Ասիայի եւ Ասորիքի

Quentin, *Histoire des Tartares*, ed. par J. Richard, Paris, 1965, p. 70:  
 67 Վառ օրինակ է Երզնկայի (Եսաի-Չիմեմի) 1230 թ. ճակատամարտը Ջալալ ալ-դինի խորեզմեան բանակների դէմ: Ռուսի սելջուկեան եւ Ասորիքի Այիպեանների զօրքերի ձեռնմեկտեղ մասնակցել են նաեւ «հայ-ֆրանկեան» զօրամիտրումներ Կիլիկեան Հայաստանից: Տե՛ս Վ. Տէր-Ղեռնդեան, *Երզնկայի 1230 թ. ճակատամարտը եւ կիլիկեանների դիրքորոշումը*, Բանբեր Մատենադարանի, հոտ. 21, Երեւան, 2014, էջ 147-157:  
 68 Տե՛ս Ibn-i Bibi, *El-Evāmirü'l-'Alā'iyye*, §. 518-519 եւ հմտ. Ibn Bibi, *Muhtasar*, §. 236:  
 69 Bar Hebraeus, *Chronography*, p. 407: Ըստ Սիմոն դը Սենթ-քուենտինի, երբ Կոստանդին պայլը Կեսարիա է գնացել, նա սուլթանից մեծ քանակութեամբ ոսկեդրամ, ինչպէս նաեւ ոսկեայ եւ արծաթե սպասք է ստացել: Տե՛ս Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, p. 69-70:

մի խումբ Այիւբեան տիրակալների՝ Ռուսի սուլթանին զինական օգնութիւն տրամադրելու պարտաւորութիւն է ստանձնել նաեւ Հայոց արքան, հաստատում է նաեւ Սիմոն դը Սենթ-Քուենտինը, ում պնդմամբ Հայոց արքան պէտք է 4 ամսով 1400 «նիզակ» (այսինքն՝ «նիզակակիրների զօրաշնչատներ») տրամադրէր սելջուկեան բանակին<sup>70</sup>:

Ըստ Իբն Բիբիի երկի համառօտ տարբերակի՝ երբ սելջուկեան զօրքը պատրաստում էր մոնղոլների ժամանմանը, «...լուր ստացուեց, որ հասնում է նաեւ takwar-ը («թագաւորը») երեք հազար Ֆրանկներով»<sup>71</sup>: Ռ. Շուքուրովն ու նրան հետեւելով նաեւ Դ. Կորոբէյնիկովը Ռուսի սուլթանին օգնութեան գնացող այս takwar-ին նոյնացրել են Տրապիզոնի կայսր Մանուէլ Ա. Մեծի հետ<sup>72</sup>: Մինչդեռ այն, որ Իբն Բիբիի երկի ամբողջական տարբերակում takwar-ի փոխարէն bāyl Sīs («Սսի պայլ») է, խօսում է յիշեալ տեսակէտի սխալ լինելու մասին: Հեթումը գուցէ եւ ձեւացրած լինի, թէ ինքը նոյնպէս օգնութեան է գնում սուլթանին՝ այնքան ժամանակ յապաղելով, ինչպէս Բար Հեբրէոսն է գրում, «մինչեւ տեսնի՝ ինչով են աւարտում դէպքերը»<sup>73</sup>:

Ինչեւէ, Հայոց արքան եւ Կոստանդին պայլը ոչ միայն չկատարեցին հայ-ֆրանկեան օժանդակ զօրք տրամադրելու իրենց

տուած խոստումը, այլեւ Կիլիկիոյ երկիրն ու ժողովրդին մոնղոլների աւերիչ ներխուժումից զերծ պահելու նպատակով հարկադրաբար, թէկուզեւ հիւրընկալութեան բարոյական նորմի կոպիտ խախտմամբ Ռուսի սելջուկ սուլթանի՝ Կիլիկիայում ապաստան գտած ընտանիքին (մօրը՝ Մահ Փէրի-խաթունին, կնոջը եւ դստերը) յանձնեցին մոնղոլներին<sup>74</sup>: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Հեթումը մեծ դժուարութեամբ եւ մեղքի զգացումով է գնացել այդ քայլին՝ ասելով. «...լաւ էր ինձ եթէ զորդի իմ զլեւոն խնդրեալ էին յինչն, քան թէ գնոսա»<sup>75</sup>: Յիրաւի, Հեթումի արարքը միակողմանի գնահատել չի կարելի, քանզի Ղիյաս ալ-Դինի ընտանիքին մոնղոլներին յանձնելով նա հազարաւոր հայրենակիցների անվտանգութեան կենաց-մահու հարց էր լուծում: Զուր չէ, որ ժամանակակից յիշատակագիրներից մեկն ուրախութեամբ արձանագրում է. «Արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերայ նշանակեալ թագաւորին Հեթոյ խորագէտ իմաստութեան եւ նախահոգակ հանճարեղութեան, մեք մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորը»<sup>76</sup>:

Հեթումի եւ Կոստանդին Պայլի այս արարքը սելջուկ սուլթանը չէր կարող ներել<sup>77</sup>: 1245 թուականին Ղիյաս ալ-Դինը

70 Տե՛ս Ան, p. 70-71: Տե՛ս նաեւ Cl. Cahen, *La Turquie*, p. 93-94:  
 71 Ibn Bibi, *Muhtasar*, §. 238.  
 72 P. Шукров, *Великие Комнины*, стр. 160; D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, pp. 178-179: Ռ. Շուքուրովը լետազայում փոխել է իր կարծիքը յիշեալ takwar-ի անձի վերաբերեալ: Տե՛ս P.M. Шукров, «Образ Киликийской Армении», с. 104:  
 73 Տե՛ս Bar Hebraeus, *Chronography*, p. 407: Լմնտ. Cahen, *La Turquie*, p. 96: Նման մի տեղեկութիւն էլ հաղորդում է Սիմոն դը Սենթ-Քուենտինը: Ըստ նրա, երբ մոնղոլները գրաւել են Կեսարիան (գրաւել է Քէօսեդաղի ճակատամարտից յետոյ - տե՛ս Գ.Դ.), լուր է տարածուել, թէ հայոց արքան գալիս է այն ազատագրելու, չնայած որ հազար թէ մեծ զօրքով գար: Այնուամենայնիւ, մոնղոլներն այս

65 Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն* (1871), էջ 518-519, ինչպէս նաեւ Աոյնի՝ (1870), էջ 525-526: Լմնտ. Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 190:  
 66 Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 119: Սիմոն դը Սենթ-Քուենտինն էլ գրում է, որ «Փոքր Հայաստանի արքան պարտաւորուել էր ծառայել «Թիւրքիայի» սուլթանին (soldano Turquie)՝ 4 ամսով 300 նիզակ[ակիր] տրամադրելով, աւելին, իր մայրաքաղաքում (in sua majori civitate) տարին մեկ անգամ յայտարարելով Մոսկովայի օրենքի գերակայութիւնը: Իր երկրում նրա հատած դրամների կէտը, գնում էր սուլթանին»: Նոյնպէս եւ Լամբրոնի տէրը (իմա՝ Կոստանդին Լամբրոնացի) պարտաւորուած էր ծառայելու նրան 29 նիզակ[ակիր]ներով, ինչպէս արքան, այսինքն ներկայանար այնտեղ, որտեղ սուլթանը կը ցանկանար նրան ուղարկել: Տե՛ս Simon de Saint-

լուրից տագնապել են եւ թողնելով իրենց ասարը փախել: Բայց յետոյ, երբ արքայի ժամանման լուրը չի հաստատուել, վերադարձել են: Տե՛ս Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, Paris, 1965, p. 76:  
 74 Տե՛ս Ibn-i Bibi, *El-Evāmirü'l-'Alā'iyye*, §. 536; Ibn Bibi, *Muhtasar*, §. 245; Սմբատ, *Տարեգիրք*, վեցնետիկ, էջ 226-227; Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 285; Bar Hebraeus, *Chronography*, pp. 407-408:  
 75 Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 285:  
 76 ԶԶԷ, ԺԳ դար, էջ 233:  
 77 Կոստանդին արարքի մասին պարսաւանքով է արտայայտուում նաեւ Սիմոն դը Սենթ-Քուենտինը: «Լեռնի մահից յետոյ, - գրում է նա, - այս Հայաստանի (իմա՝ Փոքր Հայաստանի)՝ Կիլիկիա-

վճռում է վրէժխնդիր լինել հայերից: Իկո-  
նիայի սուլթանութեանը ստորակայ հա-  
յազգի Կոստանդին Լամբրոնացի իշխանի  
հետ դաշնակցած՝ սելջուկեան բանակը Սա-  
հիբ Շամս ալ-Դինի հրամանատարութեամբ  
երկու անգամ՝ 1245 թ. եւ 1246 թ., ներխու-  
ժեց Կիլիկիա, աւերածութեան ու թալանի  
մատնեց երկրի շատ բնակավայրեր<sup>78</sup>: Մաս-  
նաւորապէս 1246 թ. սելջուկներն ահարկու  
պաշարման ենթարկեցին Տարսոնը՝ քաղա-  
նետ մեքենաներով քանդելով պարիսպնե-  
րը<sup>79</sup>: Եւ թէեւ Սմբատ Սպարապետն ու Կոս-  
տանդին Պայլն անձամբ գլխաւորեցին  
Տարսոնի պաշտպանութիւնը, քաղաքն ան-  
կարող եղաւ դիմադրել թշնամուն: Նոյն  
Սմբատն իր տարեգրութեան մէջ գրում է,  
որ կռուի թէ՛ պահին վրայ են հասել մոն-  
ղոլների դեսպանները եւ օգնութիւն առա-  
ջարկել պաշարուածներին, բայց «նա չէաք  
ի լսել. վասն զի զքաղաքն առած ունէի-  
ն»<sup>80</sup>: Քաղաքի վերջնական առձանը խան-  
գարեցին միայն սկսուած եւ ըստ Սմբատի  
20 օր տեւած տեղատարափ անձրեւներն ու  
սուլթան Քայխոսրով Բ-ի յանկարծահա-  
մահը: «Այդ թուականին սուլթան Ղիյաս  
ալ-Դինը մեծաթիւ բանակ ուղարկեց Տար-  
սոն քաղաքի վրայ, գրում է Բար Հեբրէոսն

իր արաբերէն ժամանակագրութեան մէջ՝  
շարունակելով,- եւ այն որոշ ժամանակով  
պաշարման օղակի մէջ առան, սկսեցին  
ճնշել եւ մօտ էին այն ուժով գրաւելուն, ե-  
թէ պաշարումը չհամընկնէր այդ օրերին  
սուլթան Ղիյաս ալ-Դինի մահուան  
հետ»<sup>81</sup>: Այնուամենայնիւ, Սահիբ Շամս  
ալ-Դինը, սուլթանի մահուան փաստը հա-  
յերին չբացայայտելով, նահանջելուց առաջ  
գիշերով սուրհանդակի միջոցով նամակ է  
յղում թաքվարին՝ խորամանկութեամբ  
նրանց խաղաղութիւն առաջարկելով Պա-  
կանա եւ մի քանի այլ ամրոցներ յանձնելու  
դիմաց: Իբն Բիբին հաղորդում է նամակի  
բովանդակութիւնը. «Ես միշտ ձգտել եմ  
նեցուկ լինել Ձեզ, եւ քանի անգամ եմ մեծ  
սուլթան Ալայ ալ-Դին Քայկուքադի օրօք,  
թող Ալլահը լուսաւորի նրա հոգին, տիրա-  
կալի զօրքերին հետ պահել Ձեր երկիր խու-  
ժելու մտադրութիւնից: Թաքվարը [երեւի]  
համոզուած եւ վստահ էր, որ նոյնպէս եւ  
այս անգամ պիտի կանգնեցնէի: Սակայն  
այն պատճառով, որ նորին սուլթանութեան  
գայրոյթի ծովն ալեկոծուել էր, պոռթկու-  
մով բոցավառուել, վրդովմունքի եւ ցաս-  
ման քամիներով փոթորկուել: Որովհետեւ  
երբ մեր զօրքին չար աչքը դիպաւ Քեօսէ-

յի) պարոններից մեկը՝ Կոստանդին անուանով,  
բռնի ուժով աւերակեց նրա դատարը եւ ամուս-  
նացրեց իր որդու հետ: ... Սոյն Կոստանդինը  
տարբեր հնարներով եւ միջոցներով սպանել է  
Հայաստանի վաթսուներկու մեծ պարոնների: Եւ  
երբ թուրքիայի սուլթանը նրա մօտ է ուղարկել իր  
մօրը եւ քրոջը՝ որպէս իրեն հաւատարիմ այրի եւ  
բարեպաշտ քրիստոնէայի, որ սպաստան գտնեն  
նրա մօտ եւ խոյս տան թաթարներից (իմա՝ մոն-  
ղոլներից), նա իրեն դրսեւորել է որպէս անհա-  
ւատ եւ ուխտադրուծ: Նա յանձնել է նրանց թա-  
թարների՝ նրանց բարեհաճութիւնը շահելու հա-  
մար» (Տե՛ս Simon de Saint-Quentin, *Histoire des  
Tartares*, p. 89):

78 Այս մասին տե՛ս Cl. Cahen, *La Turquie*, p. 229-  
230; P.M. Шукров, *Образ Кавказской  
Армении*, с. 106:

79 Հայկական աղբիւրների վկայութիւնները տե՛ս  
Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 123-124, նոյնի՝  
*Տարեգիրք*, Վեներիկ, էջ 227-228; Մանր ժամա-

նակագրութիւններ XIII-XVIII դդ. (այսուհետեւ՝  
ՄԺ), կազմեց Վ.Ա. Յակոբեան, հտ. 1, ՀՍՍՌ ԳԱ  
հրատ., Երեւան, 1956, էջ 81 եւ Հեթում Պատմիչ,  
*Ժամանակագրութիւն*, էջ 51; Սամուէլ Անցի եւ  
Ծարունակողներ, *Ժամանակագրութիւն*, էջ 247;  
Ա.Ս. Մաթեոսեան, *Հեթում Ախտոց Տիրոջ եւ  
Վասիլ Մարաշախտի ժամանակագրութիւննե-  
րը*, ՊԲՀ, հտ. 4, 1963, էջ 190; Լ. Տէր-Պետրո-  
սեան, *Խաչակիրները եւ հայերը*, հտ. Բ, Պատմա-  
քաղաքագիտական հետազոտութիւն (Հայկա-  
կան մատենաշար Գալուստ Կիլիկիական հիմ-  
նարկութեան), Երեւան, 2007, էջ 540 (Հեթում  
Նոյիցի, Համառոտ պատմութիւն ժամանակաց):

80 Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 123 եւ նոյնի՝ *Տարե-  
գիրք*, Վեներիկ, էջ 227:

81 Ibn al-'Ibrī, *Muhtasar*, §. 446: Գրեթէ նոյն հաղոր-  
դումը կայ նաեւ հեղինակի ասորերէն ժամանա-  
կագրութեան մէջ: Հմմտ. նոյնի՝ *Chronography*, p.  
410:

դաղում, դուք բոլոր արգահատելի արարք-  
ները՝ այդ թուում չարիքը, կեղծաւորութիւ-  
նը եւ դաւաճանութիւնը, գործեցիք: Եւ այ-  
լեւս տեղ չի մնացել ներողութեան համար,  
ուստի մենք ստիպուած էինք մեր զօրքը  
ձեր դէմ հանել: Եթէ ես հիմա հրաման ար-  
ձակեմ, մենք անմիջապէս քաղաքը կը գրա-  
ւենք: Բայց եթէ թաքվարը զղջայ եւ ներո-  
ղութիւն հայցի, վճարի նախկինում  
կնքուած պայմանագրով ստանձնած հար-  
կային պարտաւորութիւնը, վերադարձնի  
այդ ժամանակամիջոցում գողացած բերդե-  
րը՝ յանձնելով սուլթանի ենթականերին եւ  
ի հատուցում քո մեղքի՝ հարկերն անյա-  
պաղ դաճարան կ'ուղարկի, ես կը պարտա-  
ւորուեմ սրբողութեան փոշին լուսնալ  
սուլթանի ազնիւ սրտից իմ միջնորդու-  
թեան եւ հպատակութեան ջրով»<sup>82</sup>:

Երբ հայոց արքան (մի տեղ՝ bayl Sīs,  
այլուր՝ takwar Sīs) ստանում է Սահիբ Շամս  
ալ-Դինի ուղերձը, շտապում է համաձայ-  
նել: Նա իր հերթին դեսպան է ուղարկում  
սելջուկ էմիրներ մօտ եւ amān («անվտան-  
գութեան երաշխիք») խնդրելով Պականա  
(բնագրում՝ Brākanā) բերդը մի քանի այլ  
ամրոցների հետ զիջեց սուլթանի ենթակա-  
ներին: Նա նաեւ ուղարկեց նախկինում  
չվճարած եւ վճարելիք հարկերը (harāğ-e  
mādī wa-mostaqbal)՝ նուէրների հետ միա-  
սին<sup>83</sup>: Նոյնի մասին Սմբատը գրում է, որ  
իրենք, անտեղեակ լինելով սուլթան Ղիյաս  
ալ-Դինի մահուան փաստին, համաձայնե-  
ցին Պականա ամրոցը զիջելու դիմաց պա-  
տերազմական գործողութիւնները դադա-  
րեցնելու սելջուկների առաջարկին: «Եւ  
չէաք իմացեր զսուլթանին մահն.- գրում է  
նա,- զի կարէաք նեղել. յետ երկու տարւոյ  
(այսինքն՝ 1248 թ.) գողացաք զՊակա-  
նա»<sup>84</sup>: Փաստօրէն, երկու տարի անց յա-

ջողուել է կրկին տէր դառնալ կորցրած բեր-  
դին:

Հայ-սելջուկեան այս պատերազմի եւ  
բանակցութիւնների մասին հաղորդում է  
նաեւ Իզզ ալ-Դին Իբն Շադադը, միայն թէ  
իրադարձութիւնները փոքր-ինչ այլ կերպ է  
ներկայացնում. «Երբ զինադադար հաստա-  
տուեց Ղիյաս ալ-Դինի եւ թաթարների մի-  
ջեւ, նրանք թոյլտուութիւն խնդրեցին [նրան-  
ցից] պատերազմելու Հեթումի դէմ եւ ստացան  
այդ թոյլտուութիւնը (ընդգծումը մերն է-  
Գ.Դ.): [Սուլթանը] զօրք պատրաստեց  
նրանց դէմ, արշաւեց նրանց վրայ, գերեզմա-  
րեց եւ պաշարման մէջ գցեց Տարսոնում եւ  
գրեթէ պիտի գրաւէր այն: Սակայն Հեթում-  
ը [սելջուկ] զօրահրամանատարի մօտ  
դեսպան ուղարկեց, ով նրա մօտ գնաց գու-  
մարով, իսկ նա էլ վերցրեց այն եւ հեռա-  
ցաւ: Դա տեղի ունեցաւ [հիշրայի] 643 թ.  
(1245/1246 թ.)»<sup>85</sup>: Նախ, նկատենք, որ ըստ  
արաբ մատենագրի՝ Հայ-սելջուկեան զինա-  
դադարը հաստատուել է Հեթումի վճարած  
դրամի դիմաց, այլ ոչ թէ՛ Պականա բերդի  
յանձնման: Հակառակ Սմբատի վերոբերեալ  
վկայութեանը՝ աւելի կարեւոր է Իբն Շադ-  
դադի այն պնդումը, թէ Բաչու նոյինը թոյլ  
է տուել սելջուկներին արշաւել Կիլիկիա:  
Սա նշանակում է, որ, չնայած մոնղոլներին  
յայտնած հպատակութեանը, Հայ-մոնղոլա-  
կան գործակցային յարաբերութիւններ դեռ  
ձեւաւորուած չէին, եւ Բաչուն սկզբում ա-  
ւելորդ է համարել միջամտել Ղիյաս ալ-  
Դինի եւ Հեթումի կոնֆլիկտին<sup>86</sup>:

1245 թուականի դէպքերից յետոյ Իբն  
Բիբիի երկում հայ-սելջուկեան դիւանագի-  
տական շփումների, պաշտօնական նամա-  
կագրութեան, փոխադարձ դեսպանագնա-  
ցութիւնների եւ նուիրաբերման վերաբե-  
րեալ հաղորդումներ այլեւս չենք գտնում:

82 Ibn-i Bībī, *El-Evāmīrūl-'Alā'iyye*, §. 546-547; Ibn  
Bībī, *Muhtasar*, §. 250.

83 Տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը:

84 Տե՛ս Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 124: Հմմտ.  
նոյնի՝ Վեներիկ, էջ 228:

85 'Izz al-Dīn Ibn Šaddād, *Al-A'lāq al-Hafīra fi dīkr  
umarā' al-Šām wa-l-Čazīra*, §. 1.2, bi-tahqīq Yahyā  
Zakaryā 'Abbāra, Dimašq, 1991, §. 240.

86 Cl. Cahen, *La Turquie*, p. 230.

Այնուամենայնիվ, որոշ տեղեկություններ ենք գտնում օտարալեզու այլ աղբյուրներում: Օրինակ, Ֆրանսիայի արքայ, խաչակրաց է. արշավանքի առաջնորդ Լուի Թ-ի (կառ. 1226-1270 թթ.) վարքագրության հեղինակ Ժան դը ժուանվիլը (մահ. 1317 թ.) գրում է, որ հայոց արքայ Հեթումը Լուիին մի մեծարժեք վրան է նուիրել: Հայոց արքան յայտնել է, որ այդ վրանն իրեն Իկոնիայի սուլթանի ֆարրաշն (բնագրում՝ *ferrais*) է նուիրել, որը պատասխանատու էր սուլթանի վրանների եւ կացարանին հետեւելու համար<sup>87</sup>:

Ընծաների փոխանակութեան մի նշանակալի դէպքի մասին տեղեկություն գտնում ենք արաբալեզու մատենագրութեան մէջ: Սուլթան Բայբարս ալ-Բուհ-դուդարի կենսագիր եւ արքունի դիւանապետ Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Ջահիրն իր *Al-Rawḍ al-zāhir* երկում յայտնում է հայ-սելջուկեան հաշտեցման մոնղոլական իշխանութիւնների նախաձեռնած մի յաջող փորձի մասին: Մասնաւորապէս գրում է, որ երբ հայոց Հեթում արքան 1263 թ. վերադառնում էր Հուլաղուի մօտից, նա ոչ թէ Կիլիկիա մտաւ, այլ ուղեւորուեց Ռումի սուլթան Ռուքն ալ-դին Կիլիք Արսլան Դ-ի (կառ. 1246-1264 թթ.) մօտ: Ռուքն ալ-դինը, որը թշնամութիւն ունէր Հեթումի նկատմամբ, մտադրուել էր բռնել նրան եւ մեղքը բարդել թուրքմէնների վրայ: Հայոց թագաւորը, սակայն, կանխատեսել էր սա եւ Հուլաղուից իրեն ուղեկից էր խնդրել մոնղոլ դատաւորի (*qādī*) Հայոց իշխողը նրան շատ ընծաներ էր շնորհել՝ իր կողմը գրաւե-

լու նպատակով՝ ասելով. «ես չեմ կարող Ռումի երկիր մտնել առանց թաթարական զօրախմբի ուղեկցութեան, որ կ'ապահովի իմ անվտանգութիւնը»: [Այդժամ] կառին գրեց Ռումում գտնուող թաթարներին, եւ նրանցից մի զօրախումբ եկաւ՝ մօտ քառասուն հեծեալից բաղկացած: Այդ բանից յետոյ [միայն] նա ճանապարհ ընկաւ: Ռումի տէրը դիմաւորեց նրան, բայց վախեցաւ Հուլաղուի կառին տեսնելով, իսկ Հայը չվախեցաւ: Նրանք երկուսն էլ թանկարժեք նուէրներ տուեցին իրար: Ռումի տիրոջ նուէրը ներառում էր 14 նժոյգ եւ 40 հզ. դիրհամ, արքունիքի (բնագրում՝ *al-mağlis*) ամբողջ ոսկեայ եւ արծաթեայ սպասքը, եզներ եւ այլն, իսկ հայը նրան տուեց 4 բերդ: [Այնուհետեւ] բոլորով ուղեւորուեցին դէպի Հիրկալայ (իմա՝ Հերակլէա), որտեղ դաշինք կոեցին եւ համաձայնութեան եկան»<sup>88</sup>:

Այս դէպքը հայ հեղինակներից արձանագրել են նաեւ Սմբատ Սպարապետն ու Հեթում Պատմիչ Կոռիկոսցին: «Եւ խանն Հուլայուն,- գրում է Սմբատը,- վասնզի յոյժ սիրէր զթագաւորն, առաքեաց զկնի իւր իրաւազատ Մուղալք Արղուչիք»<sup>89</sup>, որք եկեալք զկնի թագաւորին մինչեւ յԱռակլի, եւ եկն անդ սուլտանն Հոռոմոց Ըռուգնատինն, եւ եղէն անդ աւուրս ինչ եւ եղին դաշինս սիրոյ երդմամբ, եւ արարին խաղաղութիւն, եւ եղեն հայր եւ որդի՝ թագաւորն եւ սուլտանն, եւ դարձան իւրաքանչիւր ի տեղի իւր»<sup>90</sup>: Հեթում Պատմիչի հաղորդումը երկու ինքնակալների հանդիպման նպատակն աւելի դիպուկ է նկարագրում՝

տե՛ս յատկապէս I. Vásáry, *The Preconditions to Becoming a Judge (Yarguči) in Mongol Iran*, Journal of the Royal Asiatic Society, vol. 26 (1-2), pp. 157-169, ինչպէս նաեւ D. Bayarsaikhan, *The Mongols and the Armenians (1220-1335)*, Leiden-Boston, 2011, p. 103, n. 28 եւ n. 29 եւ յիշեալ ծանօթագրութիւններում յղուած աղբյուրները:

90 Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վեներտիկ, էջ 241:

87 *Memoirs of the Crusades* by Villehardoin & de Joinville, tr. by Sir Frank Marzials, London & New York, 1908, p. 171.

88 Տե՛ս Ibn 'Abd al-Zāhir, *Al-Rawḍ al-zāhir*, §. 191-192: Հմմտ. Baybars al-Manṣūrī, *Zubdat al-fikra*, §. 88, ինչպէս նաեւ Գոյնի՝ *Muhtār al-ahbār*, §. 27; al-Nuwayrī, *Nihāyat al-arab*, §. 30, §. 165; al-'Aynī, *Iqd al-ḡumān*, §. 1, §. 384:

89 Արղուչիների (մոնղոլերէն՝ «յարուղա» (yaruḡa)՝ «դատավարութիւն» բառից) ինստիտուտի մասին

«վասն բերթերաց սնօռաց բաժանելոյ», այսինքն՝ «սահմանային բերդերի բաժանման համար»<sup>91</sup>:

Թորոս Ռոսլինի ձեռքով գրուած մի ձեռագրի յիշատակարանից տեղեկանում ենք, որ Հեթումը, ձեւաւորուած քաղաքական պատշաճ պայմաններն օգտագործելով, 1262 թ. մի շարք բերդեր է խլել Ռումի սուլթանութիւնից. «Այլեւ բարեպաշտութեամբն իւրով յԱստուած զօրացեալ հերքէր զյոյս հաքարածին ծննդոցն եւ անաւրինաց սեռիցն, բազում անգամ յաղթեալ սուլտանին Հոռոմոց, եւ առեալ զամուրս նորա՝ զանմատչելին Մուլտաս, եւ զՄանիւսն, զըՍիկի եւ զայլս բազում զօր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ»<sup>92</sup>: Հաւանաբար Հեթումի գրաւած այս բերդերից մի քանիսի զիջման եւ յիշեալ նուէրների փոխանակման արդիւնքում էլ կայացել է հաշտութիւնը:

Ռումի սուլթանութեան եւ Կիլիկեան Հայաստանի վերնախաւերի միջեւ ընծաների կիրառմամբ հարցեր կարգաւորելու մի դէպքի մասին էլ պատմում է Բար Հեբրէոսի ասորերէն ժամանակագրութեան մէջ: Ըստ պատմիչի՝ Ռումի սուլթանութեան վեզիր Մուլին ալ-Դին Փերուանէն, ով մանկահասակ Ղիյաս ալ-Դին Քայխուրով (կառ. 1265-1284 թթ.) սուլթանի խնամակալը լինելով, համարում էր երկրի փաստական

կառավարիչը, ցանկութիւն է յայտնում բարեկամանալ Հեթում արքայի հետ՝ կնութեան առնելով նրա դստերից մեկին: Այս հարցով միջնորդելու նպատակով նա դիմում է Բարսեղ անուկով մի հայ քահանայի, ով «թաթարների արքայի (նկատի ունի իլխանին) դեսպաններից էր»: Վերջինս խորհուրդ է տալիս վեզիրին հանդիպել հայոց արքային եւ նուէրներով պատուել, երբ նա կ'անցնի իր երկրով Իլխանութիւնից վերադարձի ճանապարհին: Բանն այն է, որ այդ ժամանակ ակնկալուում էր հայոց արքայի վերադարձն Աբաղայ իլխանի արքունիքից, որտեղ դնացել էր մամուլքեան սուլթան Բայբարսի պահանջած Սուկուր ալ-Աշկարի ազատութեան հարցով բանակցելու: Վերջինս, ինչպէս գիտենք, պիտի փոխանակուէր հայոց արքայազն եւ գահաժառանգ Լեւոնի հետ. «Այսպէս,- շարունակում է նա,- երբ արքան վերադառնում էր ուրդուից, եւ ժատեղ գիշերելով, Փերուանէն նրա մօտ եկաւ՝ Ռումի բոլոր մեծամեծերի ուղեկցութեամբ եւ նրան շատ արժէքաւոր նուէրներ մատուցեց՝ խնդրելով նրա դստեր [ձեռքը]: Բայց քանի որ արքան վախեցում էր, որ նա կարող է ճանապարհին իրեն ծուղակը գցել եւ վնասել, նա չվիրաւորեց նրան [մերժելով], այլ խոստացաւ եւ իր աջ ձեռքը մեկնեց՝ ճանապարհ ընկնելով իր երկիրը: Երբ Փերվանէն

91 Հեթում Պատմիչ, *Ժամանակագրութիւն*, էջ 53 եւ ՄԺ, հտ. 1, էջ 82:


92 Տե՛ս ՀԶՀ, ԺԳ. դար, էջ 317: Մոնղոլների Մեծ խան Մանգուի (Մոնգոլէի) մօտից «դաշինքով» վերադարձած Հեթում արքան վստահութիւն էր ձեռք բերել եւ արդէն իրեն աւելի ազատ էր գտնում Ռումի սելջուկների հետ յարաբերութիւններում՝ դեռ 1256 թուականից յամառ պայքար սկսելով մի շարք սահմանային բերդերի համար: Հմմտ. Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վեներտիկ, էջ 231, 234-235 (պատմում է Մոնղուս բերդի ազատագրման հանգամանքների մասին, որին տիրելու համար թե՛ պայքար էր գնում դեռ 1259 թուականից): Հմմտ. Գոյնի՝ *Տարեգիրք*, Փարիզ, էջ 124; ՄԺ, հտ. 1, էջ 82; Գոյնի՝ հտ. Բ, էջ 70-71 եւ Հեթում Պատմիչ, *Ժամանակագրութիւն*, էջ 52, 53, ինչպէս նաեւ Սամուէլ Անեցի եւ Թարունակողներ,

*Ժամանակագրութիւն*, էջ 250, 251; Լ. Տէր-Պետրոսեան, *Խաչակիրները եւ հայերը*, էջ 541 (Հեթում Նդիրցի, Համառոտ պատմութիւն ժամանակաց): Ա.Ս. Մաթեոսեան, *Հեթում Ախտոց Տիրոջ եւ Վասիլ Մարաքախտի ժամանակագրութիւնները*, էջ 190: Ինչպէս կարելի է եզրակացնել այս աղբյուրների վկայութիւններից, Մանգու բերդն էլ 1260-1261 թթ. միջակայքում կոռուսիւմը է եղել նաեւ հայերի եւ թուրքմէն կարամանեանների միջեւ, որից յետոյ Հեթումի գրաւելուց առաջ բերդը հաւանաբար կրկին անցած է եղել Իկոնիայի վերահսկողութեան տակ: Հմմտ. Ա. Յովհաննիսեան, Կիլիկիայի հայկական թագաւորութեան եւ կարամանեան պետութեան յարաբերութիւնների պատմութիւնից (XIII դարի երկրորդ կես), «Պատմա-բանասիրական հանդէս», № 1, 2014, էջ 127-130:

սկսեց խնդրել նրան, արքան պատասխանեց. «Մեզ համար նպատակայարմար չի լինի հարսանեաց հանդէս անել, երբ նրա եղբայրը բանտարկութեան մէջ է: Փերուանէն սպասեց մինչեւ որ նրա եղբայրը եկաւ, եւ որեւէ պատրուակ չմնաց նրան (դստերը)

նրանից հետու պահելու համար, բայց դուստրը մահացաւ, եւ Բարսեղ վանականը [նոյնպէս] զայրոյթի մէջ մահացաւ»<sup>93</sup>: Խոսքն այստեղ Հեթումի Զաբել (Իզաբել) ա- նունով դստեր մասին է, ով մահացել է 1268/1269 թ.<sup>94</sup>:


Պատկերներ



Պատկեր 1. Gennadius MS. 1.5 ձեռագրի 166ա թերթի հունարեն հիշատակարանը

<sup>93</sup> Bar Hebraeus, *Chronography*, p. 447.


<sup>94</sup> Տե՛ս նաև Լ. Տէր-Պետրոսեան, *Խաչակիրները եւ հայերը*, էջ 312-313, ծմթգր. 84:



Պատկեր 2. Gennadius MS. 1.5 ձեռագրի 166բ թերթի հայերեն հիշատակարանը



Պատկեր 3. Ստամբուլի Սուլեյմանիյե գրադարանի Այա Սոֆիայի Հավաքածուի՝ Իբն Բիբի Երկի ամբողջական տարբերակի միակ պահպանված թիվ 2985 ձեռագրի 20բ էջը, որտեղ սկսվում է Հայոց արքունիք սելջուկ սուլթանի Հյուրընկալության մասին պատումը:



Պատկեր 4. Ռ. Շուքուրովի կասկածելի վերծանած Իբն Բիբի Երկի Հատվածը

ԿԱՐԱՊԵՏ ԵՐԵՒԱՆՑԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲԴԱԼ, ԲԱԼԱՍԱՆ,  
ԽԱԶԱՏՈՒՐ ԵՒ ԱԶԱՐԻԱ (ԺԳՆԱԻՈՐՆԵՐ)

Մերուժան Կարապետեան

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ժէ. դարի 40-60-ական թուականներին առաջին եւրոպացի Հայագէտ Կղեմէս Գալանոսի կողմից Հիմնուեցին Հայկական վարժարաններ Կ.Պոլսում, ապա՝ Հռոմում եւ ի վերջոյ՝ Լեհաստանում, Լեովում: Այս բոլոր վարժարանները մի շարք պատճառներով կարճատեւ կեանք ունեցան, իսկ աշակերտները՝ յաճախ տարօրինակ ճակատագրեր: Հռոմի Հաւատասփիւռի ժողովի ղեկանում մեր յայտնաբերած փաստաթղթերը թոյլ է տալիս հետեւելու այդ վարժարանների Հիմնադրման, կենսագործունէութեան, դասաւանդող առարկաներին եւ մեթոդաբանութեանը, աշակերտներին եւն: Վերջին տարիներին առանձին ուսումնասիրութեան նիւթ դարձրինք Գալանոսին աշակերտած անձանց կենսագործունէութեան վերականգնումը մշտապէս յենուելով Հաւատասփիւռի ժողովի ղեկանի նիւթերի յայտնաբերման, դասակարգման եւ մեկ համատեքստում ներկայացնելու վրայ: Ստորեւ ներկայացուում են Կղեմէս Գալանոսի եւ նրա հիմնած վարժարանների հետ այս կամ այն չափով առընչուած եւս հինգ անձանց՝ Կարապետ վրդ. Երեւանցու, Յովհաննէս Աբդալի, Բա-

լասանի, Խաչատուր եւ Ազարիա ճգնաւորների մասին ղեկանում պահպանուած տեղեկութիւնների քննութիւնը:

1. ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԵՐԵՒԱՆՑԻ (°-1662) ա. Կարապետ Երեւանցի Աղսում (1638-1643).

Կարապետ վրդ. Երեւանցին նախկինում լինելով Պողոս Փիրոմալլու աշակերտներից եւ նրա հետ միասին Երեւանից փախչողներից էր, զգալով Փիլիպոս կաթողիկոսի եւ էջմիածնական կղերականների ատելութիւնն իրենց հանդէպ<sup>2</sup>:

1638 թ. Կարապետ վարդապետը Պոլսում էր, երբ Պոլսում ստացուեց կաթողիկոսի 1637 թ. Սեպտեմբերի 3-ի գրուած ընդդէմ Փիրոմալլու եւ վերջինս, իր գրելով, ստիպուած էր Պոլսից Հռոմ ապաստանել Ոսկան Երեւանցու եւ Զաքարիա Աղամի հետ միասին<sup>3</sup>: Փիրոմալլու փախչելուց յետոյ, Կարապետ վարդապետը մնում է Պոլսում, հակառակ նրա որ ուսման պատճառով հետեւում էր իր ուսուցչին:

1641-1642 թթ. Պոլսի պատրիարք դարձաւ Կարապետ վարդապետի եղբայրը, Կիրակոս վարդապետը, որը, երբ վախճանուեց 1642 թ. Յունիսին, եւ դեռ չէր ընտրուել նրա յաջորդը, Գալանոսը 1642 թ. Յուլիսի 18-ին գրում էր Հաւատասփիւռի ժողովի

1 Տե՛ս Մ. Կարապետեան, Յակոբ Գրիգորենց (1639-°), «Հայաստանը եւ արեւելաքրիստոնէական քաղաքակրթութիւնը. Գ»: Եր., 2018, էջ 91-113; Նոյնի, Առաքել արքեպիսկոպոս Երեւանի եւ Առաքել արքեպիսկոպոս Օռորթնիցի, «ՀԱ», 2018, էջ 159-274; Նոյնի, Կ. Պոլսի պատրիարքներ թով-մա Վրդ. Բերիացի (1603-1658) եւ Դաւիթ Բերիացի (°-1679), «ՀԱ», 2019, էջ 297-394; Նոյնի, Զաքարիա Աղամ (1611-1688), «ՀԱ», 2020, էջ 181-

228; Նոյնի, Խաչատուր Գաղատացի Սսի Կաթողիկոս (1606-1674), «ՀԱ», 2021, էջ 275-318  
2 Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Մ. Կարապետեան, Զաքարիա Աղամ (1611-1688), «ՀԱ», 2020, էջ 184, ծանօթ. 10:  
3 Տե՛ս SOCG, vol. 159, f. 171: